

ՏԵՍԼԱԿԱՆԻ ՄԱՐԴԸ



ՊԵՐՃ ԹԷՐԶԵԱՆ

(1938-2025)

ՊԱՏՈՒՈՅ ԱՏԵՆԱՊԵՏ ՀԲԸՄԻՈՒԹԵԱՆ
ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ
ԵՒ ՏԵՂԱԿԱՆ ՄԱՍՆԱՃԻԴԻՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ



ԴԻԻԱՆ

ԵԳԻՊՏՈՍԻ ՀԱՅՈՅ ԹԵՄԻ
ԳԱՀԻՐԷԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ

ՄԱՀ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ՅՈՒՂԱՐԿԱՌՈՐՈՒԹԻՒՆ

Գահիրեի Ազգային Առաջնորդարանը
խորը ցառով կը գուժէ մահը
Գահիրեի Պատկ. Թեմական Ժողովի երկարամեայ
նախկին անդամ եւ Քաղաքական Ժողովի ատենապետ,
Եգիպտահայ Բարերար

ՊԵՐՃ ԹԵՐՁԵԱՆԻ

Հանգուցեալ բարերարին թաղման եկեղեցական կարգը
տեղի պիտի ունենայ

**Երեքշաբթի, 16 Դեկտեմբեր 2025-ին,
Ժամը 1:00-ին,**

Գահիրեի Ս. Գրիգոր Լուսատրիչ եկեղեցոյ մէջ,
Ապա մարմինը պիտի ամփոփուի
Հելիոպոլսոյ Ամենայն Սրբոց
Ազգային Գրեզմանատան մէջ:

Ընտանիքը ցաակցութիւնները պիտի ընդունին
Չորեքշաբթի, 17 Դեկտեմբեր 2025
Երեկոյեան ժամը 6-9,
Կոկանեան Սրահին մէջ:



ԼՈՒՍԱՀՈԳԻ ՊԵՐՃ ԹԵՐԶՅԱՆԻ ՍԳԱԿԻՐ ԸՆՏԱՆԻՔԻՆ

Եզիպտոսի Հայոց Թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Աշոտ Եպիսկոպոս Մնացականյանից ցավով տեղեկացանք Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու հարազատ գավակ Տիար Պերճ Թերզյանի մահվան մասին: Հանուն Գերագույն Հոգևոր Խորհրդի և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանության՝ Մեր անկեղծ վշտակցությունն ենք հղում հանգուցյալի այրուն՝ Տիկին Սեդային, և սգակիր բոլոր հարազատներին:

Տիրոջ կամքով առիթ ենք ունեցել անձնապես ճանաչելու լուսահոգի Պերճ Թերզյանին՝ սիրված ու գնահատված ազգային գործչին, ով իր կյանքի ողջ ընթացքին նախանձախնդրությամբ ծառայեց մեր ժողովրդին, Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն և հայրենի երկրին:

Բարեհիշատակ Տիար Թերզյանը երիտասարդ տարիքից ներգրավվեց Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության առաքելության մեջ և շուրջ կես դար նախանձախնդրությամբ ծառայեց նրա ազգոգուտ գործունեության արդյունավորմանը՝ իրրև Եզիպտոսի շրջանակային հանձնախմբի փոխգանձապահ, փոխատենապետ և ապա Ատենապետ: ՀԲԸՄ կազմում իր գործունեությանը զուգընթաց նա տասնյակ տարիներ կարևոր հանձնառություններ ստանձնեց նաև Եզիպտոսի Թեմական և Քաղաքական ժողովներում, հայկական կրթօջախներում, համայնքի մարզական կառույցներում ու ազգային տարրեր հաստատություններում՝ իր կարողություններն ամենայն եռանդով ու պատրաստակամությամբ ծառայեցնելով եզիպտահայ Մեր գավակների ազգային ու հոգևոր կյանքի պայծառությանը:

Հայրապետիս սրտում վառ պիտի մնա հիշատակը լուսահոգի Պերճ Թերզյանի առաքինի ու եկեղեցանվեր հայտրդու, ով ապրեց ու գործեց հոգևոր ու մշակութային մեր ժառանգության, հայոց լեզվի և նատկապես արևմտահայերենի անխաթար պահպանության հանդեպ անվճար նախանձախնդրությամբ և մշտապես դրսևորեց իր հոգու մեծ սերն ու նվիրումը առ Հայոց Եկեղեցին և աստվածկառույց Սուրբ Էջմիածինը: Մեզ համար այսօր մխիթարություն է հիշել, որ լուսահոգի հայտրդու ազգոգուտ և եկեղեցանվեր վաստակը գնահատել ենք Առաքելական մեր Սուրբ

Եկեղեցու պատվո բարձր պարգևով՝ «Սուրբ Մահակ-Սուրբ Մեսրոպ»
Հայրապետական շքանշանով:

Կորուստի այս ծանր պահին Մենք վշտակից ենք Ձեզ՝ սիրելի Տիկին Սեդա, և
Թերզյան սգացյալ ընտանիքին: Ի խորոց սրտի աղոթում ենք, որ Ամենողորմ Տերն
արարչական Իր սիրով երկնից բարձունքներում գթությամբ ու ողորմությամբ ընդունի
նորոգ հանգուցյալ Պերճ Թերզյանի հոգին և արժանացնի հավիտենական կյանքի
երանությամբ:

Մեր մաղթանքն է նաև, որ Երկնավոր Տերը Սուրբ Հոգու շնորհով սփոփանք ու
մխիթարություն պարգևի Թերզյան ընտանիքի սգակիր անդամներին ու
հարազատներին:

Օրհնություն և աղոթք ննջեցյալի բարի հիշատակին:

*«Հոգիդ ճշմարիտ, մխիթարիչ սգաւորաց, մի անտես առներ զննջեցեալս մեր, այլ
հանգո՛ զհոգի նորա ընդ սուրբս Քո. ամէն»:*

Վշտակցությամբ և օրհնությամբ՝



ԳԱՐԵԳԻՆ Բ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



**ԴԱՄԲԱՆԱԿԱՆ
ՊԵՐՃ ԹԷՐԶԵԱՆԻ
ՄԱՀՈՒԱՆ ՏԻՈՒՐ ԱՌԹԻՒ
ԳԱՀԻՐԷԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԽՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻ
16 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2025**

Միրելի սգակիր ներկաներ,

Աղօթքով վերջին հրաժեշտը կու տանք եզիպտահայ մեր համայնքի մտաւորական, ազգային գործիչ, համայնքային կառոյցներու պատասխանատու անդամներէն Պերճ Թէրզեանին:

Երկար կարելի է խօսիլ Պերճ Թէրզեան մարդու՝ եզիպտահայ ազգային կեանքէն ներս անոր բերած մեծ նպաստի մասին: Մարդու մը մասին, որ իր ողջ գիտակից կեանքը ապրած է գաղափարական եւ սկզբունքային: Մարդ՝ որուն մտահոգութիւնները մի միայն ազգայինն էին, հայեցին ու հայկականը, լեզուն եւ մշակոյթը: Մարդ, որուն ծաւալած հասարակական գործունէութիւնը տեսանելի էր ոչ միայն եզիպտահայ համայնքէն ներս, այլեւ մեծապէս գնահատուած՝ հայրենիքի եւ սփիւռքի մէջ: Մարդ, որ վճռական էր եւ պայքարող՝ կեանքի կոչելու իր բոլոր այն համոզումները, որոնք ուղղուած էին ազգային եւ հասարակական կեանքին, հոգեւոր եւ մշակութային կեանքին, հայեցի կրթութեան եւ դաստիարակութեան գործին: Եւ այս բոլորը, իբրեւ վառ վկայութիւն, արձանագրուած են անոր թողած գրական ժառանգութեան եւ յօդուածներուն մէջ, որոնց միջոցով վեր հանած է բոլոր այն խնդիրները, որոնք տեղ գտած են ազգային կեանքէն ներս:

Ուսուցողական եւ մեծապէս գնահատելի է անոր հետ իմ ունեցած գործակցութիւնս: Հակառակ տարիքային տարբերութեան, ան համեստաբար եւ խոնարհաբար թեւ ու թիկունք եղած է ինծի՝ պատուով կրելու առաջնորդի պատասխանատու բեռը:

Տարիներու ընթացքին մեր գործնական փոխյարաբերութիւնները իրենց նպաստաւոր արդիւնքը տուած են Ազգային Առաջնորդարանի կանոնաւոր եւ համակարգուած գործունէութեանը, սակայն, այս ամէնով հանդերձ, ամենէն կարեւոր ձեռքբերումը եղած է Պերճ Թէրզեան արժեքաւոր մարդը, բարեկամը, հարազատը, այնպիսի մէկը, որուն կարելի էր իբրեւ հարազատ հօր ապաւինիլ, դիմել եւ ստանալ անոր անմնացորդ աջակցութիւնը, խորհուրդներն ու խրատները:

Միրելի Պր. Թէրզեան, պիտի կարօտնամ Ձեր սուր եւ լուրջ

կատակները, համայնքային տարբեր հարցերու շուրջ մեր խորհրդածութիւններն ու երբեմն նաեւ կառուցողական եւ առկայ խնդիրները բացայայտող բանավեճերը:

Ազգային հարցերուն շուրջ սկզբունքային մօտեցումները եւ մինչեւ վերջին շունչը Ձեր ունեցած մտահոգութիւնները վառ վկայութիւնն են Ձեր ազնիւ նուիրումին եւ անկեղծ համոզումներուն: Այս ամէնով հանդերձ, բուժումի ընթացքին, կեանքի՝ համար պայքարելու փոխարէն Ձեր ամբողջ մտահոգութիւնը տակաւին կէս ձգած գործերը աւարտին հասցնելն էր: Եւ այս նկատի ունենալով է որ հիմնած էք «Պերճ եւ Սեղա Թերզեան» հիմնադրամը, որպէսզի Ձեզմէ ետք Ձեր բոլոր ծրագիրները շարունակեն կեանքի կոչուիլ, որպէսզի մեր համայնքը, հակառակ նօսրացումին՝ ունենայ հայկական դիմագիծ, ըլլայ հայախօս եւ ազգային արժէքները կրող:

Միրելի Տիկին Սեղա, կը ցաւիմ որ միայնակ ձգեց Ձեզի: Դուք ոչ միայն իր կեանքի ընկերը եղած էք, այլեւ անոր գաղափարական խորհրդակիցը: Համբերութեամբ կիսած էք այն բոլոր մտահոգութիւնները, որոնց՝ ժամեր, օրեր եւ տարիներ նուիրած է՝ ուղղակի կամ անուղղակի, մասնակիցը ըլլալով անոր գործունէութեանը:

Այսօր, Դուք կորսնցուցիք արժէքաւոր Ձեր ամուսինը, իսկ մենք՝ արժէքաւոր հայ մը, համայնքի անդամ մը, որուն համար անկեղծ սիրտով կը կիսեմ Ձեր ցաւի իմ բաժինը:

Ամո՛ւր եղէք եւ հոգուով խաղաղ, քանի որ Պր. Պերճը աւելիով ծառայած է թէ՛ ընտանիքին եւ թէ՛ ազգին՝ աւետարանական առակի գորենի հատիկին համար ըլլալով պարարտ հող՝ պտուղ տալով մէկի դիմաց հարիւր, վաթսուն, եւ երեսուն (հմմտ. Մատթ. 13: 8):

Անդառնալի այս կորուստին առջեւ, կը փոխանցենք ցաւակցութիւնները Գահիրէի եւ Աղեքսանդրիոյ հոգեւոր դասին, Թեմական եւ Քաղաքական Ժողովներուն, յարակից հոգաբարձութիւններուն եւ մարմիններուն:

Սուրբ Հոգիի մխիթարութիւնը կը հայցենք Ձեզի՝ Տիկին Սեղա, ընտանիքի բոլոր անդամներուն եւ սգակիր հարազատներուն եւ մեր համայնքի բոլոր անդամներուն:

Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի: Ամէն:

Վշտակից՝

ԱՇՈՏ ԵՊԻՄԿՈՂՈՍ

Առաջնորդ Եգիպտոսի Հայոց

Մեծայարգ
Դոկտ. Գեորգ Երզնկացեան, Ատենապետ
Եւ Յարգելի Անդամներ Հ.Բ.Ը.Մ.ի
Եզիպտոսի Շրջանակային Յանձնաժողովի
Գահիրէ, Եզիպտոս

Յարգելի Տոքթ. Երզնկացեան,

Խոր ցառով լսեցինք թէ մահացած է Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Եզիպտոսի Շրջանակային Յանձնաժողովի Պատուակալ Ատենապետ, երկարամեայ եզիպտահայ ազգային առաջնորդ, ամբողջանուէր հայ, բեղուն ազգային գործիչ, հրապարակագիր, օրինակելի միութենական Պերճ Թէրզեան:

ՀԲԸՄ-ի Կեդրոնական Կարչութեան անունով եւ անձնապէս, մեր ցաւակցութիւնները կը փոխանցենք Հանգուցեալին տիկնոջ՝ Սեղա Թէրզեանին եւ Եզիպտոսի մեր շրջանակին, մեր երեց սերունդի ամենափայլուն անձնատրութիւններէն եւ մեր Միութեան անցնող հինգ տասնամեակներու կտակարուն դէմքերէն Պերճ Թէրզեանի վախճանումին տխուր առիթով:

Տակաւին քակի մը ամիսներ առաջ, իր մտահոգութեան խորագոյն առարկան եւ յամառ պայքարին նիւթ հանդիսացող Արեւմտահայ Լեզուի Պահպանութեան վերաբերեալ իր առաջադրանքներուն շուրջ մեր նամակագրութեանց միջոցին, ան յիշած էր թէ հանգստեան կը կոչուէր եւ իր յուշերու արձանագրութեան պիտի ձեռնարկէր: Դժբախտաբար այդ ծրագիրը այսօր անաւարտ կը մնայ, սակայն ազգային կեանքէն ներս իր իրականացուցած հարուստ ներդրումը եւ անժամանցելի աւանդը, կենդանի վկայութիւնն են իր ամբողջ էութեամբ ազգին ու հայրենիքին նուիրուած տիպար հայու եւ առաջնորդի ապրող ու սերունդներու վրայ երկարող ժառանգութեան, ազգապատկան իրաւունքներու պահպանումին, շինարարական իրագործումներուն եւ հայ ու արաբ ժողովուրդներու միջեւ մշակութային փոխանակումի եւ փոխադարձ համակրանքի մշակման իր անխնայ աշխատանքին եւ ձեռքբերումներուն:

Մեր մտքերուն մէջ միշտ թարմ են ՀԲԸՄ-ի Ընդհանուր ժողովներու եւ տարբեր համաժողովրդային հանդիսութիւններու ընթացքին, որպէս երեց սերունդի պատկառելի ներկայացուցիչ, իր տիրական կեցուածքը եւ օրինակելի վարքը, որոնք որպէս երիտասարդ սերունդի անդամ եւ միութենական, խոր տպաւորութիւն ձգած են եւ ներշնչումի աղբիւր եղած են մեզի համար:

Աստուած լուսաւորէ Պերճ Թէրզեանի ազնիւ հոգին եւ թող իր ազգանուէր կեանքի բարի օրինակը շարունակէ ներշնչել միութենական մեր սերունդները:

Անկեղծօրէն՝

Մեմ Սիմոնեան
Նախագահ

Տիկին Սեդա Թերզեան
Գահիրէ
Եգիպտոս

Միրելի Տիկին Թերզեան,

Խորապէս կը բաժնենք ձեր վիշտը ձեր սիրելի ամուսնոյն Պերճ Թերզեանի յախտնական հանգիստ անցումի այս դժուար պահուն:

Մեզի համար աւելի քան մտերիմ բարեկամի մը, միութենական պատկառելի անձնատրութեան մը եւ ամբողջանուէր հայու մարմնաւորումը հանդիսացող հազուագիտ անձնատրութեան լիովին ապրուած բազմադիւն կեանքին օրինակելի ընթացքը եւ ապրող մնայուն իրականացումներու հարուստ աւանդն է որ դրոշմուած կը մնայ մեր մտքերուն մէջ, որպէս անմեռ յիշողութիւն:

Այսօր, մենք ջերմագոյն յուշերով կը վերապրինք այն տասնամեակները, որոնց ընթացքին մեր միութենական մեծ ընտանիքը երեջ եւ կրտսեր սերունդներու սերտակցութեամբ եւ առողջ ոգիի փայլուն դրսեւորումներով, կ'ապրէր ու կը գործէր ի շահ մեր ժողովուրդին եւ հայրենիքին: Այդ շքահանդէսներու եւ յոբելիական նշումներու ընթացքին, Պերճ Թերզեանի փայլուն եւ թիկնեղ ներկայութիւնը, բարոյական անխախտելի կեցուածքները, ազգային իրաւունքներու պաշտպանութեան առաջին շարքերուն, յատկապէս որպէս արեւմտահայ լեզուի պահպանումին իրաւատէր եւ անկոտրում ջատագով՝ պիտի շարունակեն մնալ մեր մտքերուն եւ հոգիներուն մէջ, որպէս բաձր օրինակ եւ խղճի ձայն:

Անշուշտ մեր ազգի պատմութեան, յատկապէս Եգիպտոսի համայնքի ազգային թէ միութենական արխիւներու արձանագրութիւններուն մէջ, Պերճ Թերզեանի ձեռքբերումները, որպէս առաջնորդ, հրապարակագիր, Եգիպտոսի եւ Հայաստանի, առաւել իբր Հայ եւ Արաբ ժողովուրդներու միջեւ մշակութային կապերու եւ փոխադարձ համակրանքի մշակումին անխոնջ գործիչ, իրենց մնայուն հանգամանաւոր տեղը պիտի ունենան: Այսօր սակայն մենք զինք կը յիշենք իր մտերմութեան մէջ, անձնական թէ ընտանեկան յարաբերութիւններու մեր փոխադարձ ջերմ յիշատակներով որոնցմով հարստացած եւ երախտաւոր կը զգանք մենք մեզ:

Այս պահուն, իմ եւ տիկնոջս Վերային եւ մեր ընտանիքին խորագգաց ցաւակցութիւնները կը փոխանցենք ձեզի եւ ձեր սիրելիներուն: Համոզուած ենք որ Պերճին ազգանուէր ազնիւ հոգին կը հանգչի յախտնականութեան մէջ եւ իր տիպար հայու օրինակը պիտի շարունակէ ներշնչել մեզ եւ յետագայ սերունդները:

Անկեղծ Վշտակցութեամբ՝



Պերճ Մեղրակեան
Պատուոյ Նախագահ



Խոր կսկիծով տեղեկացանք մեծարգո և սիրելի Պերճ Թերզյանի մահվան մասին:

Մեր սրտացավ և խորին ցավակցություններն ենք հայտնում տիկին Սեդային, ընտանիքի անդամներին, Եգիպտոսի Հայ Առաքելական եկեղեցու առաջնորդարանին, Հ.Բ.Ը.Մ. կառույցների ղեկավարներին և անդամներին, եգիպտահայ համայնքին:

Հիրավի, ահռելի է պարոն Թերզյանի՝ եգիպտահայության մշակույթի, գիտության և այլ բնագավառներում ունեցած ներդրումը: Նա իր անխոնջ և անմենօրյա աշխատանքով նվիրվեց Հայրենիքին և համայնքին՝ մեծագույն հոգատարությամբ զարգացնելով Հայաստան-Սփյուռք բազմաբովանդակ կապերը: Անհերքելիորեն պարոն Թերզյանը իր մեծագույն դերը խաղաց նաև Եգիպտոսում Հայաստանի դեսպանության կայացման գործում:

Ցավոք մենք բոլորս կորցրեցինք մեծ Հայի և Մարդու:

Աստված Հոգին լուսավորի:

Խորին հարգանքով՝

Հրայր և Զարա Փոլադյաններ
Օմանի Սուլթանությունում ՀՀ դեսպան և տիկին

16.12.2025թ.
ք. Մասկատ

ԵԳԻՊՏՈՍՈՒՄ ՀՀ ՆԱԽԿԻՆ ԴԵՍՊԱՆ ԱՐՄԷՆ ՄԵԼՔՈՆԵԱՆԻ ՑԱԻԱԿՑԱԳԻՐԸ

Խոր ցաւով տեղեկացայ, որ Գահիրէում իր մահկանացուն է կնքել տիար Պերճ Թէրզեանը: Այդ տխուր առիթով սրտցաւ վշտակցութիւնս եւ յայտնում տիկին Սեդային, ողբացեալի մերձաւորներին եւ ողջ եգիպտահայ համայնքին:

Ինձ համար բարեբախտութիւն եւ համարում, որ տարիներ շարունակ ոչ միայն առիթ եւ ունեցել ի պաշտօնէ սերտօրէն գործակցելու այդ բացառիկ անձնաւորութեան հետ, այլեւ վայելելու նրա մտերմութիւնն ու ջերմ բարեկամութիւնը: Պերճ Թէրզեանը տասնամեակների անխոնջ գործունէութեամբ ու անժաջորդ նուիրումով անջնջելի հետք է թողել ինչպէս եգիպտահայութեան կեանքում, այնպէս էլ Հայաստան-Սփիւռք յարաբերութիւնների կայացման ու զարգացման գործում:

Նրա խորաթափանց եւ բանիմաց հասարակական գործիչի ու մտաւորականի յիշատակը միշտ վառ կը ժայ մեր սրտերում:

Հանգչիր խաղաղութեամբ սիրելի պարոն Պերճ:

Արմէն Մելքոնեան

Եգիպտոսում ՀՀ նախկին դեսպան

ՀԲԸՄԻՈՒԹԵԱՆ ԵԳԻՊՏՈՍԻ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ ԽՕՍՔԸ ՏՈՔԹ. ԳԷՈՐԳ ԵՐՋՆԿԱՑԵԱՆ

Սգակի՛ր բարեկամներ,

14 Դեկտեմբեր 2025 թուականին իր աչքերը վերջնականապես կը փակեր եգիպտահայության մոհիկաններէն մին՝ մտաւորական, հրապարակագիր, ազգային գործիչ եւ անսակարկ նուիրումի տեր, ՀԲԸՄիութեան Եգիպտոսի Շրջանակային Յանձնաժողովի եւ ՀԲԸՄի Գահիրէի մասնաճիւղի պատուոյ ատենապետ, Եգիպտոսի Հայոց Թեմի Առաջնորդարանի մեծ բարերարներէն մէկը՝ Պերճ Թերզեան, որուն կեանքը եղած է ամբողջական եւ անսակարկ նուիրում գաղութին եւ իր սիրած Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան, որուն շարքերէն ներս ստանձնած է պատասխանատու դիրքեր եւ կատարած իրապէ՛ս մեծ աշխատանք:

Այսօր եկած ենք այստեղ մեր յարգանքի վերջին տուրքը մատուցելու այս մեծ եգիպտահայուն, որ վաւերական շառաւիղն է Պօղոս Նուպարի եւ վաղեմի եգիպտահայ մեծ անուններուն:

Անոր մահը անփոխարինելի կորուստ մըն է եգիպտահայ գաղութին համար:

Ծնած է 1938-ին:

Նախակրթութիւնը ստացեր է Գահիրէի Մխիթարեան Վարժարանէն ներս:

Երկրորդական ուսումը շարունակեր է Մարոնիթ Հայրերու Վարժարանին մէջ եւ 1956-ին ստացեր երկրորդականի վկայականը:

1957-էն սկսեալ պաշտօնավարած է փոքր դրամատան մը մէջ, ուր երեք տարի ետք արդէն ունէր ստորագրութեան իրաւունք:

Աշխատանքի տարիներուն իր ուսումը շարունակելով, 1963-ին ստացած է Էյն Շամս Համալսարանի Համագործակցական եւ Վարչական Գիտութիւններու Հիմնարկի վկայականը:

1964-65 տարիներուն հետեւած է Գահիրէի Ամերիկեան

Համալսարանի կարգ մը դասընթացքներուն:

1966-ին հրաժարելով իր պաշտօնէն, սկսած է աշխատիլ տպագրական ասպարեզին մէջ:

1969-էն սկսեալ հիմնած է իր սեփական տպարանը՝ African Press: Այս հաստատութիւնը տարիներու ընթացքին զարգանալով, 1996-ին վերածուած է անանուն բաժնետիրական ընկերութեան մը:

Մինչեւ իր մահը կը վարէր նոյն ընկերութեան վարչական խորհուրդի նախագահի պաշտօնը:

1957-էն սկսեալ անդամակցած է Գահիրէի Հայ Գեղարուեստասիրաց Միութեան, որուն փոխ ատենապետը եղեր է 1975-ին:

1968-էն սկսեալ անդամակցած է Հայ Ազգային Հիմնադրամի վարչութեան («Արեւ» օրաթերթի հրատարակիչ) եւ քանի մը տարի վարած է ատենապետի պաշտօնը:

«Արեւ» օրաթերթի արաբերէն ամսօրեայ յաւելուածին հայկական նիւթերու խորհրդատուն եղած է եւ հեղինակ անոր առաջնորդող յօդուածներուն մեծամասնութեան:

1964-էն սկսեալ անդամակցած է ՀԲԸՄ-ի եւ անոր Եգիպտոսի Շրջանակային Յանձնաժողովին՝ գործելով որպէս փոխ գանձապահ, փոխ ատենապետ, ապա՝ ատենապետ:

2014-ի Հոկտեմբերին, Յանձնաժողովին 50 տարի անընդմեջ անդամակցելէ ետք, ՀԲԸՄի Ընդհանուր Կանոնագրով նախատեսուած վարչական պաշտօններ վարելու տարիքին սահմանը հասած ըլլալով, դադրած է Յանձնաժողովին մաս կազմելէ: ՀԲԸՄ-ի Կեդրոնական Վարչական Ժողովը մեծապէս գնահատելով Եգիպտոսի Շրջանակային Յանձնաժողովէն ներս իր ունեցած յիսնամեայ գործունէութիւնը եւ բեղմնաւոր իրագործումները, որոշած է զինք Յանձնաժողովի Պատուոյ Ատենապետ նշանակել եւ հրաւիրել, որ բացառութեան կարգով շարունակէ մասնակցիլ Յանձնաժողովի նիստերուն, մինչեւ որ ընթացիկ կարգ մը առկախ հարցեր իրենց բարեյաջող լուծումը գտնեն:

1980-էն 1990 անդամակցած է Գահիրէի ՀՄԸՄ ՆՌԻՊԱՐ մարզարանի վարչութեան, որ կը ներկայացնէ ՀԲԸՄ-ի Եգիպտոսի

մարզական թելը:

Ջանազան շրջաններու օժանդակած եւ անդամակցած է ՀԲԸՄ-ի Գահիրէի Տեղական Մասնաժողովին եւ 1992-էն 2002 վարած է անոր ատենապետութիւնը:

Խմբագրական խորհրդատուն եղած է Գահիրէի ՀԲԸՄ-ի «Տեղեկատու» եռամսեային:

2007-ին ընտրուած է Գահիրէի ՀԲԸՄիութեան Պատուոյ Ատենապետ:

2010 Ապրիլէն սկսեալ հայկական նիւթերու խմբագրական խորհրդատուն եղած է Գահիրէի ՀԲԸՄ-ի արաբալեզու «Արեգ» ամսօրեային:

1967-էն սկսեալ, տարբեր շրջաններու, անդամակցած է Եգիպտահայ Ուսումնական Խորհուրդին եւ Նուպարեան Ազգային Վարժարանի Հոգաբարձութեան:

1975-էն 1992 անդամակցած է Գահիրէի Թեմական եւ Քաղաքական Ժողովներուն եւ 2003-2006 եղած է Քաղաքական Ժողովի ատենապետ:

1992-ին ՀՀ Գահիրէի դեսպանատան բացումէն սկսեալ, անդամակցած է Դեսպանատան Բարեկամներու Խորհուրդին:

1999-ին ստացած է Մաշտոցի անուան Մատենադարանի յատուկ վկայագիր եւ ՄԵՄԸՊ ՄԱՇՏՈՅԻ յուշամետալ:

2005 Դեկտեմբերին ստացած է ՀՀ վարչապետին շնորհակալագիրը, Գահիրէի մէջ Հայաստանի դեսպանատան օժանդակութիւն ցուցաբերելուն համար:

2007 Ապրիլին, ստացած է ՀՀ նախագահական շնորհակալագիր՝ 1992-էն սկսեալ Գահիրէի մէջ Հայաստանի դեսպանատան սատար կանգնելուն համար:

2010-ի Հոկտեմբերին Ամենայն Հայոց Գարեգին Բ. Կաթողիկոսէն պարգևատրուած է «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշանով եւ Հայրապետական Կոնդակով, որպէս գնահատանք իր երկարամեայ ազգային-եկեղեցական, միութենական եւ հրապարակագրական գործունէութեան:

2011-ի Ապրիլին ՀԲԸՄ-ի Կեդրոնական Վարչական Ժողովի

որոշումով, արժանացած է ՀԲԸՄիության «Պատուոյ Անդամ»ի տիտղոսին, որպէս գնահատանք Միութեան մէջ իր ունեցած տասնամեակներու բազմաբնոյթ գործունէութեան:

2011 Սեպտեմբերին Հայաստանի Հանրապետութեան անկախութեան 20րդ տարեդարձին առիթով, ՀՀ Նախագահ Սերժ Սարգսեանի հրամանագրով պարգևատրուած է «Մխիթար Գօշ» մետալով, «հայապահպանման գործում ներդրած ծանրակշիռ ասանդի, հայրենիքին մատուցած ծառայութիւնների, ինչպէս նաեւ Հայաստանի Հանրապետութեան եւ օտարերկրեայ պետութիւնների միջեւ բարեկամութեան ամրապնդմանը մեծապէս նպաստելու համար»:

2013-ի Հոկտեմբերին Սփիւռքի Նախարարութեան հիմնադրութեան 5րդ տարեդարձին առիթով, պարգևատրուած է Սփիւռքի Նախարարութեան «Մայրենիի Դեսպան» մետալով:

Իր հեղինակութեամբ լոյս տեսած են 16 գիրքեր եւ գրքոյկներ:

Պերճ Թերզեանի ասանդը կենդանի պիտի մնայ զինք ճանչցողներուն եւ շրջապատին մէջ, իսկ գործը պիտի ապրի յաւիտեան, գաղութին յիշողութեան մէջ:

Մեր խորին ցաւակցութիւնները հանգուցեալին տիկնոջ՝ Սեդա Սամուէլեան-Թերզեանին:

Խունկ, աղօթք եւ խաղաղութիւն ննջեցեալի հոգիին:



«Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» մետալի տուչութիւն, 24 Ապրիլ 2011.

ՀԲԸՄԻՈՒԹԵԱՆ ԳԱՀԻՐԷԻ ՏԵՂԱԿԱՆ ՄԱՍՆԱՃԻԴԻՆ ԽՕՍՔԸ ԴՈԿՏ. ՃՈՐՃ ՄԻՄՈՆԵԱՆ

Աստուծոյ կամքին հաւատացող սգակիր ներկաներ,

Այսօր հրաժեշտ կու տանք անձնաւորութեան մը, որ իր անջնջելի հետքը թողուց մեր վրայ, որ կ'առաջնորդէր մեզ ոչ պաշտօններու մարմաջով, այլ տեսլականով, իմաստութեամբ եւ շուրջինները ներշնչելու կարողութեամբ:

Մեզի այնքան սիրելի հանգուցեալը իր ժամանակը կանխող միտքի տէր էր, կը տեսներ այն, ինչ ուրիշներու համար տեսանելի չէր, եւ կ'առաջնորդէր հաստատակամութեամբ եւ պատասխանատուութեամբ. ա յս է պատճառը մեր բոլորին սիրտերուն վրայ թողած իր անջնջելի կնիքին:

Ինչ որ ստացեր էր Աստուծմէ որպէս իմաստութիւն եւ ուսում, դրած էր իր շրջապատի ծառայութեան:

Իր ուշադրութեան կեդրոնն էին գաղութին եւ հայրենիքին գաւակները:

Նախաձեռնողը եղած է բազմաթիւ ծրագիրներու, որոնք մինչեւ օրս կը գործեն:

Ինքն է որ առաջնորդեր է մեր միութիւնը՝ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը եւ եղեր է գործունեայ աւելի քան կէս դար 61 երկար տարիներ:

Համեստ էր, ինչպէս համեստ են բոլոր մեծերը. եւ որպէս հաստատում այս խօսքիս, բայց մանաւանդ թուելու համար իր նուաճումները, կ'ուզեմ պատմել փոքր միջադէպ մը, որ տեղի ունեցած էր երկու տարի առաջ, երբ որոշում առնուեր էր Միութեանս ժողովասենեակը իր անունով կոչել: Ինք ուժգնօրէն դէմ էր գաղափարին:

-Ինչո՞ւ... պէտք չկայ...

-Կը հարցնէք «ինչո՞ւ». ուրեմն այս «ինչո՞ւ»ին պատասխանելու համար, ձեզի քանի մը հարցումներ ուղղեմ, եւ դուք անոնց պատասխանները տուէք ինձի,- ըսի,- ո՞վ էր որ հիմը դրաւ ընկերային օգնութիւններու ծրագրին:

Լուռ մնաց:

-Ո՞վ էր ու հիմը դրաւ Առողջապահական Օգնութեան ծրագրին:

Լուռ մնաց:

-Ո՞վ էր որ ունեցաւ գաղափարը մանկական երգչախումբ մը

հիմնելուն:

-Ո՞վ էր որ կարելուր նկատեց արխիվին դասաւորումը:

-Ո՞վ էր որ գրադարանին վերակազմակերպումը ձեռնարկեց:

-Ո՞վ էր որ անհրաժեշտ նկատեց արաբերէն լեզուով հանդէս մը եւ ձեռնարկեց անոր:

Այս բոլոր հարցումներուն դիմաց լուռ մնաց, որովհետեւ բոլորին ալ նախաձեռնողը ի՛նքն էր՝ Պերճ Թերզեանը...

Տիրոջմէ կը խնդրենք որ ընդունի իր բազում գործերը եւ իր հոգիին յաւիտենական խաղաղութիւն տայ: Ինչպէս եւ Աստուծոյ մխիթարութիւնը կը հայցենք իր ազնիւ տիկնոջ Սեդա Թերզեանին, Միութեան եւ համայնքի բոլոր անդամներուն եւ զինք ճանչցող, յարգող եւ սիրող մարդոց:





ՑԱԽԱԿՑԱԳԻՐ

Դառն կսկիծով տեղեկացանք եզիպտահայ մեծ մտատրական, գրող, հրապարակագիր, բարերար, ազգային գործիչ ու անձնուէր միութենական, Գահիրէի Պատկառելի Թեմական Ժողովի երկարամտայ նախկին անդամ եւ Քաղաքական ժողովի ատենապետ, Հ.Բ.Ը.Մ.Ի Եզիպտոսի Շրջանակային Երեսմաստրովի եւ Հ.Բ.Ը.Մ.Ի Գահիրէի տեղական մասնաճիւղի Ցկեանս Պատույ Ատենապետ՝ ՊԵՐՇ ԹԵՐՁԵԱՆԻ մահուան մասին, որ պատահեցաւ 2025-ի Դեկտեմբեր 14-ին:

Պերժ Թէրզեանի կեանքի ընթացքին վայելած յարգանքը, իր ինքեցած լուստոր առաջնորդ իւ իրատես ղեկավարի ղերը կը հաստատեն, թէ անփոխարինելի պիտի ըլլայ անոր կորուստը եզիպտահայ համայնքի գոյութեան մէջ:

ԱՐԵԻ թերթի աշխատակազմի անունով առանձնապէս կ'արձանագրենք մեր վիշտը կորսնցնելու Հայ Ազգային Հիմնադրամի վարչութեան երբեմնի ատենապետ, ԱՐԵԻ թերթի գրող ու աշխատակից Պերժ Թէրզեանը:

Կասկած չկայ, իր ԱՐԵԻ մէջ ստորագրած անոր յօդուածները իսկութեան մէջ անփոխարինելի խոհագրութիւններ են հայրենիքի թէ եզիպտահայ համայնքի ամենէն կենսական ու կարեւոր խնդիրներուն մասին, որոնք միշտ ալ ներկայացուած են պարզ, անպաճոյճ, իրատես եւ ըստ հարկի՝ նաեւ սուր ու խոցող նկատողութիւններով:

Եւ ոչ միայն. խնդիր մը պարզապէս ներկայացնելն իւ զայն լուարձակի տակ առնելը չէր ըլլար պր. Թէրզեանի բուն նպատակը, այլեւ՝ խնոր միանգամայն լուծումը, որ արդիւնք էր խտակ միտք ու տեսութեան, արդար դատողութեան եւ ինչ խօսք՝ հոգատար սրտի...

Կը ցափինք՝ խորապէս:

ՌԱԿ Եզիպտոսի Շրջանային վարչութեան, Հայ Ազգային Հիմնադրամի վարչութեան ու ԱՐԵԻ թերթի խմբագրութեան անունով խորին մեր վշտակցութիւնը կը յայտնենք հանգուցեայի խիկնոց՝ Սեղա Թէրզեանին, երկնային հանգիստ, լոյս ու խաղաղութիւն հայցելով հանգուցեայի հոգայն: |

Յարգանքներով՝

ՌԱԿ Եզիպտոսի Շրջանային Վարչութեան

Ատենապիր

Պերժ Գալինեան

Ատենապետ

Հրայր ճղպեան

Գահիրէ |

22-12-2025

ԿՈԿԱՆԵԱՆ ՍՐԱՀԻ ՑԱԻԱԿՑԱԳԻՐԸ

Դառն կսկիծով տեղեկացանք եգիպտահայ մեծ մտաւորական, գրող, հրապարակագիր, ազգային գործիչ ու անձնուէր միութենական, ՀԲԸՄի Եգիպտոսի Շրջանակային Յանձնաժողովի եւ ՀԲԸՄի Գահիրէի մասնաճիւղի ցկեանս Պատուոյ Ատենապետ՝ ՊԵՐՃ ԹԷՐԶԵԱՆՆԻ մահուան մասին, որ պատահեցաւ Կիրակի, 14 Դեկտեմբեր 2025-ին:

Պր. Թերզեանի տարիներու անգնահատելի վաստակը, իր ունեցած դերն ու վայելած յարգանքը կը հաստատեն, թէ անոր մահը անփոխարինելի կորուստ է եգիպտահայ մեր համայնքին համար:

Կոկանեան Սրահի վարչութիւնը իր սրտագին ցաւակցութիւնները կը յայտնէ եւ ուժ ու համբերութիւն կը հայցէ հանգուցեալի տիկնոջ՝ Սեդա Թերզեանին:

Խնկաբոյր աղօթք, յաւերժ լոյս ու խաղաղութիւն հանգուցեալի հոգւոյն:

Յիշատակն Արդարոց Օրհնութեամբ Եղիցի:

Այս տխուր առթիւ, մեր համակիրներուն ուշադրութեան կը յանձնենք, թէ Կոկանեան Սրահը երեք օր փակ պիտի մնայ:

«ՏԻԳՐԱՆ ԵՐԿԱԹ»
ՀԱՅ ՄՇԱԿ ՄԻՈՒԹԻՒՆ
ԱՂԵՋԱՆԴՐԻՒՄ

DIKRANE YERGATE
UNION CULTURELLE ARMÉNIENNE
208, Ave. Gamal Abdel Nasser
ALEXANDRIE



ديكران يرجات

جمعية ثقافية أرمينية
طريق جمال عبد الناصر - الإبراهيمية ٢٠٨
الاسكندرية

ص.ب. ١٠٨٦ - طيفون ٥٩٧٩١٨٦
مستغلة بوزارة الشؤون الاجتماعية تحت رقم ٢١٥

Աղեքսանդրիա, 9 Դեկտեմբեր 2025

Մեծայարգ

Տոքթ. Գէորգ Երզնկացեան,

Ատենապետ ՀԲԸՄիութեան Եգիպտոսի Շրջանակային Յանձնաժողովի
Գահիրէ

Խոր վիշտով տեղեկացանք Եգիպտոսի Շրջանակային Յանձնաժողովի եւ
Հ.Բ.Ը.Մ.ի Գահիրէի մասնաճիւղի Յկեանս Պատուոյ Նախագահ՝ Պերճ
Թէրզեանի մահուան մասին:

Այս տխուր առիթով, Աղեքսանդրիոյ Տիգրան Երկաթ Մշակութային
Միութիւնը իր խորազգաց ցաակցութիւնները կը յայտնէ Ձեզի, հանգուցեալի
սգակիր համայն ընտանիքին եւ բարեկամներուն:

Երկնային հանգիստ, յաւերժ լոյս ու խաղաղութիւն հանգուցեալի հոգիին:

Յիշատակն արդարոց օրինութեամբ եղիցի

Յարգանքներով՝

Տիգրան Երկաթ Մշակ. Միութեան ատենապետուհի՝

Ընդհ. Հիւպատոս Աստղիկ Ալեքսանեան



Armenian Virtual College

Ազնուափայլ տիկ. Սեդա Թերզեան
Եւ Յարգարծան Հ.Բ.Ը.Մ.-ի Եզիպտոսի Շրջանային Յանձնաժողով,

Մրտի խոր կսկիծով իմացանք Պրն. Պերճ Թերզեանի ցաւալի մահը:

Պրն. Թերզեանի կորուստը ծանր հարուած մըն է ոչ միայն ընտանիքին, մերձաւորներուն, միութենականներուն, այլ նաեւ բոլոր անոնց, որոնք ճանչցած եւ արժեւորած են անոր մարդկային նկարագիրը, կարողութիւնն ու ծառայասէր ոգին:

Մեծ ցաւ է հայ մտաւորական, գրող, հասարակական գործիչ, բարերար, անձնուէր միութենական, Հ.Բ.Ը.Մ.-ի Եզիպտոսի Շրջանային Յանձնաժողովի եւ Հ.Բ.Ը.Մ.-ի Գահիրէի մասնաճիւղի ցկեանս պատուոյ ստենապետ՝ Պերճ Թերզեանի մահը:

Անձամբ ճանչցած եւ վայելած եմ մտերմութիւնը այս ազնիւ հայորդիին, որ իր կեանքով ու գործով եղած է օրինակելի եւ տիպար նուիրեալ մը, ոչ միայն եզիպտահայ համայնքի, այլ ամբողջ հայութեան համար:

Որպէս ազգային գործիչ, ծառայասէր միութենական եւ խոհուն մտաւորական՝ յիշատակը միշտ վառ պիտի մնայ:

Այս անդառնալի կորուստի առթիւ կը յայտնեմ ՀԲԸՄ Հայկական Համացանցային Համալսարանին եւ իմ ընտանիքին խորին ցաւակցութիւնները: Ոյժ եւ համբերանք՝ Ձեզ, ընտանիքի պարագաներուն, մտերիմ բարեկամներուն եւ միութենականներուն:

Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի...

Յարգանք՝

Երուանդ Զօրեան

ՀԲԸՄ-ի Փոխնախագահ

ՀԲԸՄ Հայկական Համացանցային Համալսարանի, Հիմնադիր Նախագահ

**ARMENIAN GENERAL
BENEVOLENT
ASSOCIATION
(N.G.O)**



الجمعية الخيرية الارمنية
العمومية
في العراق
(منظمة غير حكومية)

NO : 62

Date : 28-12-2025

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն
Գահիրե , Եգիպտոս

: العدد

: التاريخ

Խոր ցառով տեղեկացանք մահուան տխուր լուրը
Եգիպտոսի Հ.Բ.Ը.Մ.-եան Շրջանակային Յանձնաժողովի եւ
Գահիրեի Մասնաճիւղին պատույ ատենապետ Պերճ
Թերզեանի :

Իրաքի Հ.Բ.Ը.Մ.-եան Վարչութիւնը , սրտանց
ցաւակցութիւնները եւ վշտակցութիւնները կը փոխանցէ
հանգուցեալի կողակիցին՝ Տիկին Սեդա Թերզեանին ,
հարազատներուն , ծանօթներուն , Միութեան անդամներուն եւ
համայն եգիպտահայութեան :

Յիշատակն Արդարոյն Օրհնութեամբ Եղիցի, Ամէն:



Մանուկ Աղամեան
Ձեռնապետ
Իրաքի Հ.Բ.Ը.Մ.-եան

العراق – بغداد – حي الرياض – محلة 910 – زقاق 17

هاتف ارضي / 7189156

E-mail : agbu_iraq@yahoo.com

ԵՐԵՒԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ ՑԱԻԱԿՑԱԳԻՐԸ

Խոր ցաւով տեղեկացայ եգիպտահայ նշանաւոր մտաւորական, ազգային արժէքների պահպանման նուիրեալ, հայոց լեզուի ու մշակոյթի անաղարտութեան ջատագով Պերճ Թերզեանի մահուան մասին: Պերճ Թերզեանը այն անձանցից էր, որոնց համար ազգային յիշողութիւնն ու պատմական գիտակցութիւնը կենսական արժէքներ են: Տասնամեակների ընթացքում նրա հրապարակախօսական, գրախօսական եւ խոհական գրութիւնները դարձան Սփիւռքի ազգային կեանքի արժանահաւատ վկայութիւններ՝ առանձնանալով մտքի ճշգրտութեամբ, լեզուի մաքրութեամբ եւ քաղաքացիական պատասխանատւութեամբ:

Նրա գործունէութիւնն ու գրաւոր ժառանգութիւնը կարելոր ներդրում են հայագիտութեան, սփիւռքագիտութեան եւ մշակութային ինքնութեան պահպանման գործում: Երեւանի Պետական Համալսարանը բարձր է գնահատում Պերճ Թերզեանի սկզբունքային այն դիրքորոշումը, ըստ որի՝ հայոց պետականութիւնը, կրթութիւնն ու ազգային դաստիարակութիւնը համարում են համազգային ապագայի հիմնասիւնները: Նրա մտածողութիւնը՝ ձեւաւորուած Սփիւռքի փորձառութեամբ, սակայն մշտապէս ուղղուած դէպի հայրենիք, արժէքաւոր դաս է բոլորիս համար:

Պերճ Թերզեանի մահը մեծ կորուստ է ո՛չ միայն եգիպտահայ համայնքի, այլեւ ողջ հայութեան համար: Նրա անունն ու գործը հայ ժողովրդի յիշողութեան մէջ կը մնան որպէս բարոյական ուղենիշ եւ անշահախնդիր ծառայութեան օրինակ: Երեւանի պետական համալսարանի եւ անձամբ իմ անունից խորին ցաւակցութիւն եմ յայտնում հանգուցեալի ընտանիքին, հարազատներին, բարեկամներին եւ նրան գնահատող բոլոր անձանց:

Թող լուսաւոր լինի նրա յիշատակը:

**ՀԲԸՄ-ՀԵԸԻ «ԽՕՄՆԱԿ» ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹԻ
ԽՄԲԱԳԻՐ
ՀԱՄԲԻԿ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆԻ ՑԱԻԱԿՑԱԳԻՐԸ**

Ազնուափայլ Տիկին Սեդա Թերզեան, Գահիրէ- Եգիպտոս
Ազնիւ Տիկին Թերզեան,

Խոր վիշտով վերահասու դարձայ Ձեր ազնուական ամուսնոյն, յարգարժան ազգայինին եւ պատուական բարեկամիս՝ պարոն Պերճ Թերզեանի մահուան բօթին: Անձամբ ծանօթացած ու գործակցած ըլլալով յարգելի պարոն Թերզեանին հետ, հիացած էի անոր մարդկային նկարագրին, բժախնդիւր հայու եւ մարդու տիպարին, նախանձախնդիւր միութենականին արի եւ գնահատելի կեցուածքին:

Անձնապէս յարգած եմ զինք որպէս ազգային խիզախ գործիչ եւ անաչառ մտաւորական, միաժամանակ խորապէս գնահատած իր միութենանուէր, եկեղեցանուէր եւ ազգանուէր՝ առաքելութիւնը, եւ մանաւանդ ունեցած անշահախնդիւր կեցուածքը՝ որպէս ղեկավար եւ առաջնորդ, երբ իր հարուստ գիտելիքներով, հեռատես ու շրջահայեաց քաղաքականութեամբ կը ղեկավարէր ՀԲԸՄի մեր շրջանակը, սիրուած ու գնահատուած ըլլալով բոլորէն անխտիր:

Իր մահով ոչ միայն դուք, կամ Եգիպտոսի ՀԲԸՄի շրջանակը կամ Եգիպտոսի գաղութը ընդհանրապէս, այլ մեր բովանդակ ժողովուրդը կորսնցուց առաքինի նկարագիրով ազգային անձնատրոթիւն մը, զոր ճանչցած, յարգած ու սիրած եմ, կիսելով իր գաղափարական առողջ դատողութիւնը, միշտ հաւատալով, որ գալիք սերունդները շատ բան ունին սորվելիք ու ժառանգելիք իրմէ, խոնարհելով անոր գլխագիր ՄԱՐԴ ըլլալու անսակարկ ու անշահախնդիւր վեհութեան առջեւ:

Ազնիւ տիկին Թերզեան, այս տխուր առթիւ ցաւակցելով խորապէս, ձեզի կը մաղթեմ համբերութիւն, եւ նախախնամութենէն կը հայցեմ, որ տայ երկնային մխիթարութիւն՝ ձեր մեծ ու անդառնալի կորուստին առթիւ:

Պարոն Թերզեանի հոգին թող հանգչի երկնային խաղաղութեան մէջ, որուն համար կ'աղօթեմ:

Յարգանքներով՝
Համբիկ Մարտիրոսեան
Խմբագիր
ՀԲԸՄ-ՀԵԸ-ի «ԽՕՄՆԱԿ» Պաշտօնաթերթի
Պէրութ, 17-12-2025

ՑԱԻԱԿՑԱԳԻՐ

ՄԻՏՆԻԻ ՀԲԸՄԻՈՒԹԵԱՆ «ՄԻՈՒԹԻԻՆ» ԱՄՍԱԳՐԻՆ ԽՄԲԱԳԻՐ ՍԱՐԳԻՍ ՄԱՆՈՒԿԵԱՆԷՆ

ՀԲԸՄ Եգիպտոսի Մեծայա՛րգ Անդամներ,
Մեծ ցաւով իմացանք եգիպտահայ մտաւորական Պերճ Թէրզեանի մահուան բօթը:

Ասիկա իսկական կորուստ է ո՛չ միայն Եգիպտոսի ՀԲԸՄիութեան, այլ բոլորիս՝ ՀԲԸՄիութեան աշխարհատարած մեծ ընտանիքին համար:

Ընդունեցէք մեր խորազգաց ցաւակցութիւնները:

Մենք մեր ամսագրին Սիտնիի ՀԲԸՄիութեան «Միութիւն» ամսագրին մէջ կ'անդրադառնանք այս տխուր լուրին եւ կը ներկայացնենք Պերճ Թէրզեանին կեանքն ու գործունէութիւնը:

ՀԲԸՄի Սիտնիի մեծ թիւով անդամներ ջերմ յիշողութիւններ ունին պարոն Թէրզեանէն եւ խորապէս տխուր են իր մահուան լուրին դիմաց:

Հանգչիր խաղաղութեամբ:

Յարգանքներով՝

«Միութիւն» ամսագրի խմբագիր

Սարգիս Մանուկեան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ ՍՈՒՐԻՈՅ ԴԵՄՊԱՆ

ՆՈՐԱ ԱՐԻՍԵԱՆԻ ՑԱԻԱԿՑԱԳԻՐԸ

Խոր ցաւով տեղեկացայ մտաւորական, ազգային գործիչ պրն. Պերճ Թէրզեանի մահուան մասին:

Այդ անդառնալի կորուստի կապակցութեամբ կը ցաւակցիմ ՀԲԸՄ ընտանիքին և սգակիր անդամներուն:

Սփիւռքահայութեան համար մեծ վիշտ է անուանի եւ վաստակաշատ ազգային գործիչ Թէրզեանի անդառնալի կորուստը:

Անգնահատելի էր իր ներդրումը նաև գիտական ոլորտին մէջ: Աստուած հոգին լուսաւորէ:

Նորա Արիսեան

ԱՊԱԳԱՅ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ՈՉ ԵՒՍ Է ՄՏԱԻՈՐԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԻՉ ՊԵՐՃ ԹԷՐԶԵԱՆ

Դառն կսկիծով տեղեկացանք եզիպտահայ մեծ մտաւորական, գրող, հրապարակագիր, բարերար, ազգային գործիչ ու անձնուէր միութենական, Գահիրէի Պատկառելի Թեմական Ժողովի երկարամեայ նախկին անդամ եւ Քաղաքական Ժողովի ատենապետ, ՀԲԸՄի Եզիպտոսի Շրջանակային Յանձնաժողովի եւ ՀԲԸՄի Գահիրէի մասնաճիւղի ցկեանս Պատուոյ Ատենապետէ ՊԵՐՃ ԹԷՐԶԵԱՆի մահուան մասին, որ պատահեցաւ Կիրակի՝ 14 Դեկտեմբեր 2025-ին:

Գահիրէի Ազգային Առաջնորդարանի հանգուցեալ մեծ բարերարին թաղման եկեղեցական կարգը տեղի ունեցաւ Երեքշաբթի՝ 16 Դեկտեմբեր 2025-ին, Գահիրէի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցոյ մէջ, ապա անոր մարմինը ամփոփուցաւ Հելիոպոլսոյ Ամենայն Սրբոց Ազգային Գերեզմանատան մէջ:

Պերճ Թերզեանի կեանքի ընթացքին վայելած յարգանքը, իր ունեցած լուսաւոր առաջնորդի ու իրատես ղեկավարի դերը կը հաստատեն, թէ անփոխարինելի պիտի ըլլայ անոր կորուստը եզիպտահայ համայնքի գոյութեան մէջ:

Մոնթրէալի Թէքէեան Սշակութային Միութեան, ՌԱԿ «Էօժէն Բաբազեան» Ակումբի եւ «ԱՊԱԳԱՅ» շաբաթաթերթի վարչութեանց անունով կը յայտնենք մեր խորին ցաւակցութիւնները հանգուցեալին տիկնոջ՝ Սեդա Սամուէլեան-Թերզեանին եւ համայն հարազատներերուն, երկնային հանգիստ, լոյս ու խաղաղութիւն հայցելով հանգուցեալի հոգւոյն:

Յիշատակն Արդարոյն Օրհնութեամբ Եղիցի:

ՈՉ ԵՒՍ Է ԵԳԻՊՏԱՀԱՅ ՇԱՆՕԹ ՄՏԱԻՈՐԱԿԱՆ ՊԵՐՃ ԹԷՐՁԵԱՆ

Մփիւոքը կ'ապրի անդադրում տերեւաթափ մը: Շաբաթ չ'անցնիր, որ սա կամ նա գաղութէն մեզի չհասնի կորստաբեր լուր մը՝ գուժելով մահը գրական, կրթական, լրագրական կամ հանրային ասպարէզէն վաստակաւոր դէմքի մը, նուիրեալ անունի մը: Կը տխրինք խորապէս ու անմիջապէս անձնատուր կ'ըլլանք յոռետեսական անդրադարձումներու. կը մտածենք որ մեզմէ անդարձ բաժնուող այս անձերը, ամենայն հաւանականութեամբ, փոխարինողներ պիտի չունենան, ամայութիւն մը պիտի թողուն իրենց ետին...:

Դեռ անցեալ Սեպտեմբերին կորսնցուցեր էինք անգուգական գրագէտ ու խմբագիր Ռ. Հատտէճեանը (Պոլիս), յետոյ՝ անկրկնելի քերականագէտ տոքթ. Արմենակ Եղիայեանը (Պէրյուր), աւելի ետք գուժեցինք մահը վաստակաշատ տնօրէնուհի տիկ. Ազնիւ Քիրիշեանի (Հալէպ, Սոնրէալ), հնչակեան մամուլի երկարամեայ սպասաւոր տոքթ. Արշակ Գազանճեանի, պատմագիր Տ. Զաւէն աւ. քինյ. Արզումանեանի...: Ետեւ-ետեւի, առա՛նց դադարի...:

Այսօր ալ, ահաւասիկ, սրտի մորմոքով կը հաղորդենք մահը եգիպտահայ ծանօթ մտաւորական Պերճ Թէրզեանի: Ան իր վերջին շունչը փչած է Կիրակի, 14 Դեկտեմբերին, Գահիրէ, 88 տարեկանին:

Միսալ պիտի չըլլայ եթէ ըսենք, որ Պերճ Թէրզեան եգիպտահայ գաղութի ամենէն հանրածանօթ, ամենէն յարգուած դէմքերէն մին էր: Տասնամեակներ շարունակ ան բազմաբնոյթ ծառայութիւններով իր նպաստը բերած է եգիպտահայոց ազգային, միութենական եւ հրատարակչական կեանքին՝ շօշափելի եւ աշխոյժ ներդրումներով: Ձեռնհասօրէն գլխաւորած էր ՀԲԸՄի Գահիրէի մասնաճիւղը, արտակարգօրէն գործուն պահելով զայն՝ հակառակ գաղութին տարապայման նօսրացումին: Ի՛նք էր, որ նախաձեռնած էր «Արեւ» օրաթերթի արաբերէն համանուն յաւելուածին հրատարակութեան (1998-2009), այդ ամսագրին էջերուն մէջ շարունակ ստորագրելով առաջնորդող խմբագրականներ, արաբ մտաւորականներ ժողվելով իր շուրջ:

Գրչի տէր էր պրն. Թէրզեան: Ունէր պատմելու, վերլուծելու հայերէն վճիտ ոճ մը, ինչ որ շատ մատչելի կը դարձնէր իր հայաստառ յօդուածներն ալ, որոնք առաւելաբար լոյս տեսած էին «Արեւ»-ի մէջ:

Ատոնց մէկ ժողովածուն հաստորով լոյս տեսաւ 2010-ին, «Յետադարձ անդրադարձ» վերնագրով:

Վերջին 15 տարիներուն յաճախ մեր հասցէին կը հասնէին Պերճ Թէրզեանի անունը կրող գիրքեր կամ գրքոյկներ, որոնք տպուած էին իր սեփականութիւնն եղող «Աֆրիքըն փրէս» տպագրատան մէջ եւ որոնք կը շօշափէին եգիպտահայ այժմու գաղութին առնչուող հետաքրքրական հարցեր: Զոր օրինակ՝ «Գահիրէի ՀԲԸՄի Սաթենիկ Չագրը հիմնադրամի հրատարակչական գործունէութիւնը» (2012), «Հայաստանի Հանրապետութեան Եգիպտոսի դեսպանատան ծննդոցը» (2012) կամ «ԱՐԵԻի արաբերէն ամսօրեայ յաւելուածը» (2014):

Վաստակը մեծ է ողբացեալ մեր երէց բարեկամին: Իր մահով անմոռանալի էջ մը կը փակուի Գահիրէի հայ ազգային կեանքի պատմութեան մէջ, կը շիջի զօրեղ եւ հատու ձայն մը: Կ'անհետանանայ հայ գիրի հաւատարոք սպասաւոր մը եւս:

«Արարատ» կը ցաւակցի եգիպտահայ գաղութին, Բարեգործականի Գահիրէի շրջանակին եւ ողբացեալին ընտանեկան պարագաներուն:



ՎԱԽՃԱՆՈՒԵՑ ԵԳԻՊՏԱՀԱՅ ԳԱՂՈՒԹԻ ՆԱՀԱՊԵՏՐ

Պերճ Թերզեան. Եգիպտոսի հայազաղութի նահապետը, որ վերջին 25-30 տարիներին լինելով Թեմական խորհրդի անդամ, երբեմն՝ ատենապետ, յաճախ նաեւ ՀԲԸՄիութեան շրջանակային վարչութեան ղեկավար, իսկ յաճախ էլ՝ առանց որեւէ պաշտօնի, բոլոր պարագաներում, պետական մարմինների մօտ թէ այլուր, միշտ եւ շարունակ տէր է կանգնել հայազաղութի շահերին, օգտակար դառնալով նաեւ, ՀՀ անկախութիւնից յետոյ, Գահիրէում մեր դեսպանութեանը:

Լինելով յարգուած գործարար, առեւտրային տպարանի սեփականատէր, միաժամանակ՝ քաջահմուտ արարերէն լեզուին, եգիպտական բարբերին, պետական գրասենեակների ասանդական գործելակերպին, նրա խորհուրդները որոշիչ են եղել մեր ազգային, հասարակական կեանքի կազմակերպչական գործերում, իսկ տազնապալի ժամանակներում, ինչպէս 2010-ականներին, երբ ծայրայեղ լարուեցին յարաբերութիւնները Եգիպտոսի արմատական մահմետականների եւ 8-10 միլիոն հաշուող ղպտի քրիստոնէական համայնքի միջեւ, նա բնաւ չլքեց մայրաքաղաքի կեդրոնական հրապարակներից մէկում գտնուող եւ Գրիգոր Եղիայեանի նուիրատութեամբ վեր խոյացող մեր առաջնորդանիստ տաճարն ու յարակից գրասենեակը: Նա իսկապէս յարգուած էր տեղի պետական պաշտօնեաների ու տարբեր համայնքների ու կազմակերպութիւնների ղեկավարների կողմից որպէս պարկեշտ, լուրջ հեղինակութիւն: Նրա խօսքը յարգում էին:

Միաժամանակ՝ նա ջատագովն ու պաշտպանն էր եգիպտահայ մամուլին, յատկապէս «Արեւ» օրաթերթին, իսկ վերջին տարիներին կանոնաւոր պարբերականութեամբ լոյս էր ընծայում «Տեղեկատու» գրքոյկը, որտեղ հրապարակում էր իր յօդուածները, որոնցից վերջինը նուիրուած էր արեւմտահայերէնի պահպանման դժուարին խնդրին:

Փառասէր չէր Պերճ Թերզեանը, հետեւաբար՝ ոչ էլ ցուցամոլ: Լուրջ եւ լրջախոհ սիրում էր գործել անադմուկ, բայց արդիւնաւետ: Նրա աշխատանքը տարիների ընթացքում տուել է շօշափելի արդիւնքներ մի այնպիսի մարզում, որին մեր ազգայիններից միայն քչերն են եղել հետամուտ ծագումով հայապատկան կալուածների ու շինութիւն-

ների վերատիրացում՝ հնարաւորութեան սահմաններում եւ համապատասխան փաստաթղթերի առկայութեան դէպքում: Եւ հենց նրա ջանքերով է, որ Հայ եկեղեցին եւ ՀԲԸՄիութիւնը վերստին տէր են դարձել հանգամանքների բերումով կամ 50-ականների պետականացման հետեւանքով իրենց կորցրած ունեցուածքներին: Այդ կալուածներից մէկը, թերեւս ամենից նշանաւորը, Ճանիկ Չազրրի վիլլան էր, որը փաստաթղթերի կարգաւորումից յետոյ, Եգիպտոսում ՀՀ դեսպան Էդուարդ Նալբանդեանի պաշտօնավարութեան ժամանակամիջոցում, տրամադրուեց Հայաստանի Հանրապետութեանը որպէս դեսպանատուն գործածելու պայմանով:

Պատկերացում կազմելու համար ասենք, որ այդ վիլլան, բաւական մեծ առանձնատունն իր գողտրիկ այգով, գտնուում է օտարերկրեայ դեսպանատներին յատկացուած եւ անվտանգային գօտի համարուող փողոցի վրայ, որտեղ միայն մեր դեսպանութիւնը ունի ամրան շոգ երեկոներին, պաշտօնական բացօթեայ ընդունելութիւններ կազմակերպելու հնարաւորութիւն՝ կանաչ մարգագետնի տարածքում նախանձը շարժելով հարեւանութեամբ գտնուող մեծ, շատ հարուստ երկրների դեսպանութիւններին:

Հայրենասէր մարդ էր Պերճ Թէրզեանը: Տարին առնուազն մէկ անգամ, տիկնոջ՝ Սեդայի հետ նա այցելում էր Երեւան եւ հանդիպումներ ունենում տարբեր մտաւորականների հետ, ներկայ լինում համերգների, մշակութային միջոցառումների:

Վերջին անգամ, երբ հիւանդութիւնը խորացած էր նրա մօտ, անուասայլակով, հոգատար եւ ուշադիր իր կողակցի ուղեկցութեամբ նա կրկին այցելեց Երեւան,- աւա դ, վերջին անգամ,- մասնակցեց Պրահայում լոյս տեսնող «Օրեր» ամսագրի 25-ամեակին նուիրուած ԹՄՄիութեան կազմակերպած երեկոյին:

Հարուստ կենսագրութիւն, ամուր յետագիծ թողած մարդ է Պերճ Թէրզեանը, կառուցողական ոգով, միշտ հանրօգուտ աշխատանքի յետամուտ: Նա գնաց միանալու այն յոյլին, այն փառաւոր սերնդին, որը կերտեց այժմ նօսրացած եգիպտահայ գաղութի մտաւորական, լրագրողական, գրական, քաղաքական, կուսակցական, բարեգործական փառաւոր անցեալը, ազգային դէմքը:

Հանգիստ իր ոսկորներին:

Յակոբ Աւետիքեան

«ՅՈՒՍԱԲԵՐ»Ի ԵՒ «ՅԱՌԱՋԴԻՄԱՍԷՐ»Ի ՇՐՋԱՆԱԿԻՆ ԽՕՍՔԸ

Խոր վշտով եւ մեծ ցաւով տեղեկացանք Գահիրէի Պատկ. Թեմական ժողովի նախկին անդամ, Քաղաքական Ժողովի ատենապետ եւ բարերար, ՀԲԸՄ երկարամեայ ատենապետ, նուիրեալ Ազգային գործիչ պր. Պերճ Թերզեանի մահուան լուրը: Իր ողջ կեանքի ընթացքին ան անսակարկ նուիրումով ծառայեց գաղութին, մեր ժողովուրդին, կրթական, մշակութային եւ ազգային կեանքին՝ թողնելով մնայուն եւ լուսաւոր հետք:

Պր. Թերզեան իր իմաստութեամբ, տեսլականով ու անսպառ աշխատասիրութեամբ մեծապէս նպաստեց ՀԲԸՄ-ի առաքելութեան հզօրացմանը եւ սերունդներու կրթութեան ու ազգային ինքնութեան պահպանման սրբազան գործին: Ան եղաւ օրինակելի առաջնորդ, արժէքներով հարուստ մտաւորական եւ հաւատարիմ ծառայ մեր ազգին:

Այս ծանր կորստեան առիթով մեր խորին ցաւակցութիւնները կը յայտնենք իր ընտանիքին, հարազատներուն, ընկերներուն եւ ամբողջ ՀԲԸՄ ընտանիքին: Թող իր լուսաւոր յիշատակը մնայ անմար, իսկ իր կեանքի գործը՝ շարունակուի յաջորդ սերունդներու ձեռքով:

Աստուած հոգին լուսաւորէ:

«Յուսաբեր»ի եւ «Յառաջդիմասէր»ի շրջանակ

Դեկտեմբեր 2025 — Եզիպտոս

ՄԱՀԱԳՐԱԿԱՆ «ՅՈՒՍԱԲԵՐ» ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ԹԵՐԹԻՆ ՄԷՋ

Մահացաւ Պերճ Թէրզեան:

Դեկտեմբերի 15-ին հրապարակուած մահազդէն ցառով տեղեկացանք Գահիրէի Պատկառելի Թեմական Ժողովի նախկին անդամ, Քաղաքական Ժողովի ատենապետ, ՀԲԸՄի երկարամեայ ատենապետ Պերճ Թէրզեանի մահուան լուրը:

Իր ողջ կեանքի ընթացքին անսակարկ նուիրումով ՀԲԸՄին, ան փորձեց ծառայել համայնքին:

Հանգուցեալի դրական նուաճումներէն ամենէն նշանակալին ՀԲԸՄի գործունէութեան աւանդական դաշտն ընդլայնելու եւ արաբակադեմականներու ներգրաւումով Հայ դատին աջակցող քարոզչական հարթակին՝ «Արեւ»ի արաբերէն ամսական պարբերականի հրատարակութեան նախաձեռնութիւնն էր, որուն հետագային բնական կարգով յաջորդեցին այլ հրատարակութիւններ, մեծապէս հարստացնելով Հայ Դատի հիմնաւորման արաբատառ գրակա-նութիւնը աշխարհի այս բաժնի ակադեմական հաստատութիւն-ներուն մէջ:

Հայ իրականութեան մէջ Պերճ Թէրզեան այն սակաւաթիւ մարդոցմէ կրնանք նկատել, որոնք ջանացած են լաւապէս եւ բազմաթիւ աղբիւրներէ տեղեկացուած ըլլալ եւ հեշտացնել նոյնը շահագրգռուողներուն համար: Այս ծիրին մէջ կրնանք տեղաւորել եգիպտահայ պարբերականներու՝ «Յուսաբեր»ի, «Արեւ»ի եւ «Ջահակիր»ի հաւաքածոներու մանրաժապաւէնի (Microfilm) վրայ պահապանումը, որոնցմէ օրինակներ ապահովեց ՀԲԸՄ-ին: (Օգտուելու համար, անհատը պէտք է դիմէր մանրաժապաւէնները ընթեռնելի դարձնող գործիքն ունեցող հաստատութեան, որ Գահիրէի մէջ միայն ՀԲԸՄ-ի գրասենեակն էր): Հետագային՝ արհեստագիտութեան սրնթաց զարգացման հետ, այս սպասարկութիւնը աւելի ճկուն եւ մատչելի դարձաւ օգտագործողին: Իր նախաձեռնութեամբ մանրաժապաւէնի վրայ պահուած «Արեւ»ի հաւաքածոները հետագային թուայնացուեցան եւ հանրայնացուեցան:

Նման նախաձեռնութեամբ մը Թէրզեան Քաղաքական Ժողովի ատենապետ եղած միջոցին առաջադրեց ազգային իշխանութիւն-ներուն՝ Թեմական եւ Քաղաքական Ժողովներուն ատենագրութիւն-ներուն եւ այլ կարեւոր վաւերաթուղթերու մանրաժապաւէնի վրայ պահապանումը: Նկատի ունենալով որ ՀԲԸՄը պիտի ստանձնէր այս

աշխատանքին նիւթականի տրամադրումը, առաջադրուած պայմաններէն էր, որ օրինակ մը ՀԲԸՄ-ին վերապահուի: Այդ ժամանակ այս ծրագիրը բեկանուեցաւ:

Բնական է մտածել, որ նման անձնատրոթիւն մը իր դեկավարած Եգիպտոսի ՀԲԸՄ-ի արխիւները ամենէն առաջ ապահոված է եւ օրինակներ տրամադրած միութենական կեդրոններուն թէ պետական արխիւին:

Պ. Թերզեանի եզակիութիւնը իր տրամադրութեան տակ գտնուող նիւթական թէ վարչական միջոցները մնայուն արժէքներ գնուելու եւ ժառանգ թողելու մտասուեռման մէջ էր, որուն մէջ ինք գերազանց էր եւ յիշատակութեան արժանի:

Կենդանի եւ յարաշարժ գործողութեան կալուածներուն մէջ՝ ընդհակառակը, ան միշտ զգուշաւոր էր, կը խուսափէր նորամուծութեան դաշտ մտնել, օրինակ կրթական կալուածին մէջ, թէւ ինք մտահոգ էր հայերէն լեզուի, հայագիտական առարկաներու թէ ընդհանրապէս վարժարաններու կրթական մակարդակով եւ անոնց ապագայով, միաժամանակ կը տիրապետէր վարչական թէ նիւթական միջոցներուն գործնապէս զանոնք փարատելու քայլեր առնելու, սեփական կամ այլոց գաղափարներ իրագործելով:

Զինք կրնանք բնութագրել տիպար Հայ պահպանողական, որ ինչպէս հաշուենկատ պաշտօնականութիւնները յարգող է մարդոց հետ յարաբերած միջոցին, հանրային կեանքին մէջ զգուշաւոր է իր քայլերուն մէջ: Ան պատրաստ չեղաւ ռիսքի ու թռիչքի, եթէ նոյնիսկ այդ թռիչքը ժառանգ պիտի մնար հետնորդներուն ու պատմութիւն կերտեր:

Այնուամենայնիւ, ինչ ալ հասցուց ընել ան հանրային կեանքին մէջ, արդէն հսկայ ուստում էր, բաղդատած իր նախորդներուն:

Վերջապէս, ՅՈՒՍԱԲԵՆ, Պ. Թերզեանի շիջումով, հաւատարիմ ընթերցող մը կորսնցուց, որ մինչեւ վերջին տարիները կը հետեւէր թերթին ու կապ կը պահպանէր խմբագրութեան հետ:

Հողը թերեւ գայ վրան:

«ՆՈՐ ՄԱՐՄԱՐԱ» ՕՐԱԹԵՐԹ
ՄԱՀ ԵԳԻՊՏԱՀԱՅ ԱՆՈՒԱՆԻ ԳՈՐԾԻՉ
ՊԵՐՃ ԹԷՐԶԵԱՆԻ

Եգիպտահայ աղբիւրներ ցաւով կը հաղորդեն համայնքային կեանքի սիւներէն մէկուն՝ անուանի գործիչ Պերճ Թերզեանի մահուան լուրը: Թերզեան մեր ողբացեալ խմբագրապետի բարեկամներէն մէկն էր, իր հրատարակած գիրքերուն մասին միշտ անդրադարձներ եղած են «Մարմարա»ի մէջ, տակաւին քանի մը ամիս առաջ արձագանգ հանդիսացած էինք իր վերջին գրքոյկին: Ստորեւ, յապաւումներով կը հրատարակենք «Պայքար» շաբաթաթերթի լրատուութիւնը.

* * *

Գահիրէի մէջ, 14 Դեկտեմբերին, կեանքին հրաժեշտ տուաւ եգիպտահայ հասարակական-մշակութային գործիչ, ներհուն մտաւորական, հրապարակախօս, բարերար, հայ գիրի եւ գրականութեան, մանաւանդ Արեւմտահայերէնի ջերմ պաշտպան, եգիպտահայ գաղութի նահապետներէն Պերճ Թերզեանը (1938-2025) Անցնող վեց տասնամեակներու եգիպտահայ գաղութի հանրային կեանքի պատմութիւնը անկարելի է պատկերացնել առանց Պերճ Թերզեան անունին:

Թերզեան ծնած է Գահիրէի մէջ, նախակրթութիւնը ստացած է տեղւոյն Մխիթարեան եւ ապա Մարոնիթ հայրերու վարժարաններէն: Աւարտած է Այն-էլ-Շամս համալսարանի վարչական գիտութեանց հաստատութիւնը, որմէ ետք յաճախած է Գահիրէի Ամերիկեան համալսարանը:

Անուանի գործիչը շուրջ կէս դար պատասխանատու պաշտօններ վարած է ՀԲԸՄիութեան Եգիպտոսի ղեկավար մարմիններուն մէջ: Եղած է ՀԲԸՄ Եգիպտոսի Շրջանակային Յանձնաժողովի եւ Գահիրէի ՀԲԸՄի Պատուոյ Ատենապետը: Ան եղած է Եգիպտահայոց Թեմի կարեւոր ղեմքերէն, երկար տարիներ մաս կազմելով Գահիրէի Թեմական եւ Քաղաքական Ժողովներուն, յաճախ ատենապետելով Քաղաքական Ժողովին:

Թերզեան անժամանակաւ նուիրուած է սփիւռքահայ եւ մանաւանդ եգիպտահայ մամուլին: Եղած է «Արեւ» օրաթերթի արաբերէն ամսօրեայ յաւելումածին հայկական նիւթերու խորհրդատուն, ինչպէս նաեւ Գահիրէի ՀԲԸՄիութեան «Տեղեկատու» եռամսեայի եւ Միութեան «Արեգ» արաբալեզու ամսօրեայի հայկական նիւթերու

խմբագրական խորհրդատուն:

Պերճ Թերզեան տարիներ շարունակ ղեկավարած է ՀԲԸՄ Գահիրէի «Սաթենիկ Ճ. Չագրը» հրատարակչական եւ վաւերագրական հիմնադրամը, որուն իրագործումներէն էր «Արեւ» օրաթերթի 1915-2000 թուականներու հաւաքածոյի թուայնացումը եւ հրատարակութիւնը բազմաթիւ կարեւոր արաբերէն թէ հայերէն հատորներու:

Թերզեանի մահով կ'անհետանայ եգիպտահայ գաղութի փառքի օրերու կերտիչներէն եւ հայ մշակոյթին լաւագոյնս ծառայած երախտաւորներէն վերջին մոհիկանը:

«ՀԱՅ ԿԵԱՆՔ»Ի ՄԱՀԱԳՐԱԿԱՆԸ

Խոր կսկիծով տեղեկացանք եգիպտահայ մեծ մտաւորական, գրող, հրապարակագիր, բարերար, ազգային գործիչ եւ անձնուէր միութենական, Գահիրէի Պատկառելի Թեմական Ժողովի երկարամեայ ատենապետ, ՀԲԸՄի Եգիպտոսի Շրջանակային Յանձնաժողովի եւ ՀԲԸՄի Գահիրէի մասնաճիւղի ցկեանս Պատուոյ Ատենապետ ՊԵՐՃ ԹԷՐԶԵԱՆԻ մահուան մասին, որ պատահեցաւ Կիրակի, 14 Դեկտեմբեր 2025ին:

Եգիպտոսի Հայոց Թեմի Առաջնորդարանի հանգուցեալ մեծ բարերարին թաղման եկեղեցական կարգը տեղի ունեցաւ Երեքշաբթի, 16 Դեկտեմբերին, Գահիրէի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցոյ մէջ, ապա անոր մարմինը ամփոփուեցաւ Հելիոպոլսոյ Ամենայն Սրբոց Ազգային գերեզմանատան մէջ:

Պերճ Թերզեանի կեանքի ընթացքին վայելած յարգանքը, իր ունեցած լուսաւոր առաջնորդի եւ իրատես ղեկավարի դերը կը հաստատեն, թէ անփոխարինելի պիտի ըլլայ անոր կորուստը եգիպտահայ համայնքի գոյութեան մէջ:

Այս տխուր առիթով, «Հայ Կեանք» իր խորին վշտակցութիւնը կը յայտնէ հանգուցեալի տիկնոջ՝ Սեդա Թերզեանին, երկնային հանգիստ, լոյս ու խաղաղութիւն հայցելով հանգուցեալի հոգւոյն:

Յիշատակն Արդարոց Օրհնութեամբ Եղիցի:

ՅՈՎԻԿ ԷՕՐՏԷՔԵԱՆԻ ՑԱԻԱԿՑԱԳԻՐԸ «ՊԱՅՔԱՐ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻՆ ՄԷՁ

Գահիրեի մէջ, Դեկտեմբեր 14-ին, կեանքին հրաժեշտ տուաւ եգիպտահայ հասարակական-մշակութային գործիչ, ներհուն մտաւորական, հրապարակախօս, բարերար, հայ գիրի եւ գրականութեան, մանաւանդ արեւմտահայերէնի ջերմ պաշտպան, եգիպտահայ գաղութի նահապետներէն Պերճ Թէրզեանը:

Անցնող վեց տասնամեակներու եգիպտահայ գաղութի հանրային կեանքի պատմութիւնը անկարելի է պատկերացնել առանց Պերճ Թէրզեան անունին: Գահիրէ ծնած Թէրզեան նախակրթութիւնը ստացած է տեղոյն Միսիթարեան եւ ապա Մարոնիթ հայրերու վարժարաններէն: Աւարտած է Այն-էլ-Շամս համալսարանի վարչական գիտութեանց հաստատութիւնը, որմէ ետք յաճախած է Գահիրեի Ամերիկեան համալսարանը:

Եգիպտահայ անուանի գործիչը 1969-ին հիմնած է «African Press» տպագրատունը, ծաւալելով թէ՛ առեւտրական եւ թէ՛ հայ հրատարակչական գործունէութիւն: Թէրզեան կանուխէն անդամակցած է Գահիրեի Հայ Գեղարուեստասիրաց Միութեան (ԹՄՄ), Հայ Ազգային Հիմնադրամին (ՌԱԿ-ի Եգիպտոսի Շրջանակի պաշտօնաթերթ «Արեւ» օրաթերթի հրատարակիչ), ՀԲԸՄիութեան Եգիպտոսի Շրջանակային Յանձնաժողովին, Գահիրեի ՀՄԸՄ Լուսարար մարզարանի վարչութեան, որ ՀԲԸՄի մարզական կառոյցն է: Թէրզեան շուրջ կէս դար պատասխանատու պաշտօններ վարած է ՀԲԸՄիութեան Եգիպտոսի ղեկավար մարմիններուն մէջ: Եղած է ՀԲԸՄ Եգիպտոսի Շրջանակային Յանձնաժողովի եւ Գահիրեի ՀԲԸՄի Պատուոյ Ատենապետը: Ան եղած է Եգիպտահայոց Թեմի կարեւոր ղեմքերէն, երկար տարիներ մաս կազմելով Գահիրեի Թեմական եւ Քաղաքական Ժողովներուն, յաճախ ատենապետելով Քաղաքական Ժողովին:

Թէրզեան անմնացորդ նուիրուած է սփիւռքահայ եւ մանաւանդ եգիպտահայ մամուլին: Եղած է «Արեւ» օրաթերթի արաբերէն ամսօրեայ յաւելումածին հայկական նիւթերու խորհրդատուն, ինչպէս նաեւ Գահիրեի ՀԲԸՄիութեան «Տեղեկատու» եռամսեայի եւ Միութեան «Արեգ» արաբալեզու ամսօրեայի հայկական նիւթերու խմբագրական խորհրդատուն: Պերճ Թէրզեան տարիներ շարունակ ղեկավարած է ՀԲԸՄ Գահիրեի «Սաթենիկ Ճ. Չազրր» հրատարակչական տնտեսական շաքարի արտադրող ընկերութեան:

րակչական եւ վաւերագրական հիմնադրամը, որուն իրագործումներէն էր «Արեւ» օրաթերթի 1915-2000 թուականներու հաւաքածոյի թուայնացումը եւ հրատարակութիւնը բազմաթիւ կարեւոր արարելէն թէ հայերէն հատորներու, որոնց մէջ առանձնայատուկ յիշատակութեան արժանի կը մնան Հայ Դատի մասին արարական մամուլին մէջ լոյս տեսած նիւթերու հատորաշարքերն ու Յարութիւն Գեորգեանի «Հայկական Յեղասպանութիւն» ծաւալուն հատորին արարելէն օրինակը, որուն արարելէն թարգմանութիւնը վերանայած, իմբագրած եւ անուանացանկը կազմած էր պատմաբան Գեորգ Եազրճեանը: Թերզեան ստորագրած է մեծ թիւով յօդուածներ եւ հրապարակագրական էջեր, մանաւանդ «Արեւ»-ի էջերուն:

Հանգուցեալ Թերզեան հեղինակ է հետեւեալ հատորներուն.- «Եգիպտահայ հայեացքներ պատմութեան, քաղաքականութեան եւ մշակութային ժառանգութեան մասին» (արարելէն), «Ինչպէ՞ս տօնուեցաւ հայ պարբերական մամուլի 200-ամեակը Գահիրէի մէջ», «Անտեղի պատիւի մը շոյլումին առիթով», «Յետադարձ անդրադարձ-յօդուածներու, էլոյթներու, հարցազրոյցներու եւ ուսումնասիրութեան ժողովածոյ», «Տեղեկագիր Գալուստեան եւ Նուպարեան վարժարաններու 1989-ի վաւերացուած կանոնագիրներուն մասին», «Գահիրէի ՀԲԸՄ-ի Սաթենիկ Չազրը Հիմնադրամի հրատարակչական գործունէութիւնը», «Հայաստանի Հանրապետութեան Եգիպտոսի դեսպանատան ծննդոցը-ակնարկ 20-ամեայ հեռաւորութենէ», «Սպիտակի երկրաշարժը, Եգիպտոսի ՀԲԸՄ-ը եւ Եգիպտոսի համայնքը (համահեղինակ Արաքսի Տեօվլէթեան)», ««Արեւ»-ի արարելէն ամսօրեայ յաւելուածը», «Պատասխան առ որ անկ է», «Սրտցաւ կոչ հայոց լեզուին համար», «Տիգրան Պապիկեան (համադրում)», «Գահիրէի համալսարանի հայագիտական ուսումնասիրութիւններու կեդրոնը», «Հայաստան-սփիւռք համահայկական Ա. համաժողով, մտորումներ քսանամեայ հեռաւորութենէ», «Հրաչ Մանուկեան ՀԲԸՄ-ի եւ ՀԵԸ-ի վաստակաւոր անդամ (համադրում)» եւ «Կարելի՞ է Արեւմտահայերէնը փրկել այսօրուան ցաւալի վիճակէն»: Կեանքի վերջալոյսին Թերզեան Գահիրէի Առաջնորդարանին մօտ հիմնադրամ մը հաստատած էր: Պերճ եւ Սեդա Թերզեաններ նիւթապէս աջակցած էին Լոռիի Եղեգնուտ գիւղի մանկապարտէզի սենեակներէն մէկը երիտասարդական կեդրոնի վերածելու ծրագիրին:

Առ ի գնահատանք իր բազմարդիւն ծառայութիւններուն, հայ տիպ ու տառին նուիրեալ Թերզեան արժանացած է շքանշաններու,

մետալներու եւ գնահատագիրներու, որոնցմէ կ'արժէ յիշել Մատենադարանի «Մեսրոպ Մաշտոց» յուշամետալը, Հայաստանի վարչապետի «Շնորհակալագիր»-ը, Ամենայն Հայոց Կաթողիկոսի «Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ» շքանշանը եւ Հայրապետական Կոնդակը, ՀԲԸՄի «Պատուոյ Անդամ»ի տիտղոսը, Հայաստանի նախագահի «Մխիթար Գօշ» մետալը եւ Սփիւռքի նախարարութեան «Մայրենիի Դեսպան» մետալը:

Թերզեանի մահով կ'անհետանայ եգիպտահայ գաղութի փառքի օրերու կերտիչներէն եւ հայ մշակոյթին լուսագոյնս ծառայած երախտաւորներէն վերջին մոհիկանը:

Մեր խորին ցաւակցութիւնները այրի տիկին Սեդա Սամուէլեան-Թերզեանին, բոլոր հարազատներուն եւ բարեկամներուն:

Լոյս յի յիշատակին եւ բիւր յարգանք իր վաստակին:

Յ.Է.

«Պայքար» 21 Դեկտեմբեր 2025, էջ 10

«ՕՐԵՐ» ամսագիրը կը միանայ բոլոր ցաւակցական խօսքերուն:
Աստուած հոգին լուսաւորէ:

ԳԷՈՐԳ ԵԱԶԸՃԵԱՆԻ ԽՕՍՔԸ

Ի Տէր հանգեալ ՏԵՍԼԱԿԱՆԻ ՄԱՐԴԸ՝ ՊԱՐՈՆ ՊԵՐՃ ԹԷՐԶԵԱՆ

Խոր ցաւով տեղեկացայ, որ հիւանդութեանց դէմ երկարատեւ պայքարէ ետք 14 Դեկտեմբերին իր հոգին աւանդած է եգիպտահայ գաղութի նահապետը՝ ազգային գործիչ, մտաւորական, Գահիրէի ՀԲԸՄԻ շարժիչ ուժը՝ պարոն Պերճ Թերզեանը: Զինք ճանչցայ իբրեւ յամառ, հետեւողական եւ տեսլականներ կրող ղեկավար, ոչ անոնցմէ որոնք մեր աջ ու ձախ կողմը կը վիստան: Յանդուգն էր իր արծարծած հարցերուն մէջ, եւ ծայր աստիճան հետեւողական համաձայնեցուած որոշումներու կիրառման ուղղութեամբ: Եգիպտահայ գաղութը, նաեւ ՀԲԸՄԻ ղեկավար շրջանակները ամենէն շատ պիտի զգան պարոն Թերզեանի նման ԽՈՂՄԱՆ անձի մը կորուստին տարողութիւնը:

Հանգուցեալին հետ ունեցայ մօտ քառորդ դար երկարած հաղորդակցութիւն, եւ ԴՐԱԿԱՆ ՇԱՏ ԲԱՆ ՍՈՐՎԵՅԱՅ ԻՐՄԷ: Ան եղաւ իմ ուսուցիչներէն՝ բառին վաւերական իմաստով: Կը խոստովանիմ՝ եթէ չըլլային պարոն Թերզեանի առասպելական համբերատարութիւնն ու հետեւողականութիւնը, գլուխ չէին գար դռկտոր Յարութիւն-Ռեմոն Գէորգեանի «Հայոց ցեղասպանութեան ամբողջական պատմութիւնը» կոթողային հատորին արաբերէն թարգմանութեան իրագործումն ու հրատարակումը, իրագործում մը, որու մէջ ունեցած եմ համեստ լումաս: Միայն այս աշխատութեան ի լոյս գալը բաւական պիտի ըլլար, որ գլուխս կորաքամակ ու երկարատեւ խոնարհիւի պարոն Պերճ Թերզեանի յիշատակին առջեւ:

Խորապէս կը ցաւակցիմ բոլոր սգակիրներուն, բոլորիս, մասնաւորաբար երկար տասնամեակներու իր կեանքի ընկեր, գորգորոտ կին, ազնուափայլ տիկին Սեդային: Սուրբ Հոգիին ներգործութիւնն ու Պերճ Թերզեան ազնուագոյն մարդու անթառամ յիշատակը թող մխիթարեն սգակիրներս, ամէն:

«ԳՈՂԱՐ» ԳՐԱԴԱՐԱՆԻ ՏԷՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ ՅԱՐՈՒԹ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆԻ ԽՕՍՔԸ

Յարուր խաչատուրեան

22 Ռեկտեմբեր 2025

Սիրելի՛ Տիկ. Սեդա,

Խոր կակիծով կարդացի մեր բոլորին սիրելի եւ յարգելի Պրն. Պերճին մահուան բօթը:

Մեծ կորուստ է որպէս ամուսին, հարազատ բարեկամ եւ ազգային նուիրեալ մտաւորական, ազնիւ մեծ մարդ եւ հայ Պրն. Պերճը, որուն յիշատակը անմար պիտի մնայ մեր բոլորին եւ բոլոր հանգուցեալին ճանչցողներուն, վերջին 60-70 տարիներուն, յիշողութեան մէջ:

Կը ցաւակցինք եւ կը հայցենք Ամենակալին մխիթարութիւն եւ ծով համբերութիւն: Իր ազնիւ հոգին թող հանգիստ ենջէ յաւիտեանական լոյսին մէջ:

Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի:

Խունկ, մոմ եւ աղօթք իր անաղարտ հոգւոյն:

Յարուր խաչատուրեան

P.O. Box 17-5511
243 Armenia (ex-Nahr) Street
Beirut 1104.2050 Lebanon

Tel. 961-1/566665
Fax 961-1/445879
info@aakgroup.com

ԱՆԻ ԹՈՐԱՆԵԱՆԻ ՑԱԻԱԿՑԱԳԻՐԸ

Խոր ցաւով եւ մեծ յարգանքով պիտի յիշենք եգիպտահայ գաղութի նահապետին Պերճ Թէրզեանին մարդու մը, որուն կեանքն ու գործը նուիրուած էին համայնքին, մշակոյթին եւ մտաւոր ծառայութեան: Անոր բացակայութիւնը ծանր կորուստ է ոչ միայն իր սիրելի կնոջ՝ Տիկ. Սեդային եւ մտերիմներուն, այլեւ ամբողջ սփիւռքահայութեան համար:

Պերճ Թէրզեանը Գահիրէի հայկական համայնքին առաջնորդ էր իր իրական իմաստով: Ան մտաւորական էր՝ խոհեմ դատողութեամբ, ազնիւ կեցուածքով եւ սկզբունքային մտածողութեամբ: Գիրքերու, հեղինակ ան խօսքը գիտէր վերածել գործի, իսկ գիտելիքը՝ ծառայութեան: Անոր գրական եւ հանրային գործունէութիւնը միտուած էր պահպանելու հայկական ինքնութիւնը, խթանելու կրթութիւնը եւ զօրացնելու համայնքային համերաշխութիւնը Գահիրէի հայկական իրականութեան մէջ:

Որպէս նահապետ ան առաջնորդեց ոչ թէ բարձրաձայն խօսքով, այլ սեփական օրինակով: Պերճ Թէրզեանին ներկայութիւնը վստահութիւն կը ներշնչէր, իսկ խօսքը՝ հանգստութիւն: Ան գիտէր լսել (քիչերուն տրուած ընդունակութիւն), խորհիլ եւ ճիշդ պահուն՝ ճիշդ խօսք ըսել: Այդ խոհեմութեամբ ան դարձած էր միաւորող ոյժ՝ կամուրջ սերունդներու, կարծիքներու եւ փորձառութիւններու միջեւ:

Ցաւօք շատ ուշ կայացաւ մեր ծանօթութիւնը, միայն վերջերս, երկու տարի առաջ: Սակայն նոյնիսկ այդ կարճ ժամանակը բաւական եղաւ զգալու անոր մարդկային ջերմութիւնը, միտքի խորութիւնը եւ բարութեան, կամեցողութեան լուռ ուժը: Այդ ուշացած ծանօթութեան ամփոսանքը միաժամանակ վերածուեցաւ երախտագիտութեան՝ զայն ճանչնալու եւ անոր ներկայութենէն ուսանելի բան մը քաղելու համար:

Պերճ Թէրզեանին յիշատակը կը մնայ անոր գիրքերուն, կառուցած յարաբերութիւններուն եւ այն համայնքին մէջ, որ ան սիրեց ու առաջնորդեց նուիրումով:

Թող անոր կեանքը օրինակ ըլլայ շատերուն համար, օրինակ՝ գործելու համեստութեամբ եւ ազնութեամբ, իսկ յիշատակը՝ մնայուն լոյս մեր հաւաքական յիշողութեան մէջ:

Խոնարհումս:

«ԱՄԷՆ ՏԵՂ ՀԱՅ ԿԱՅ» ՆՄԱՆ ՀԱՅ ԿԱՅ

Մարուշ Երամեան

Ամէն մարդ կը խրատէ, կը համոզէ, կը յորդորէ զինք գրել եգիպտահայ գաղութի վերջին շրջանի պատմութիւնը (վերջին յիստ ւն տարիներու. ո՞ր կէցեր է Քարտաշեանին կամ միւսներուն գրածը, մինչեւ ո՞ր թուականը հասեր ու կէցեր է), բայց ինք, ծանր ու վերջնական, կը պատասխանէ.

-Ես պատմաբան չեմ:

Մարդիկ սակայն, այս ծանր ու վերջնական պատասխանէն ետք, աւելի մեծ խանդավառութեամբ կը լծուին զինք համոզելու դժուար աշխատանքին. անոնց հետ ես ալ.

-Բայց միայն դո՛ւք կրնաք դէպքերն ու եղելութիւնները այս մանրամասնութիւններով գրել,- կ'ըսեմ:

Լուռ կը մնայ լռութեամբ մը, որ նոյնքան յամառ է:

Բաւական ետք կ'անդրադառնամ, որ խօսիլս սկիզբէն իսկ աւելորդ էր պարզ այն պատճառով, որ ինք արդէ՛ն, առանց փող ու թմբուկի գրեր է եւ կը շարունակէ գրել եգիպտահայոց վերջին շրջանի պատմութիւնը: Ոչ միայն կը գրէ, այլ եւ կը հրատարակէ իր տպարանէն ներս, միջակ չափի պրակներով, որոնց թիւը աւելի քան տասնեակ մը կը կազմէ եւ որոնք ընդհանուր անուն մըն ալ ունին՝ ժողովուրդին քով, կամ ընթերցող հասարակութեան համար՝ «կապոյտ գիրքերը» (հետեւողութեամբ Մաօ-ի «կարմիր» եւ Քատտաֆիի «կանաչ» գիրքերուն ...):

Լազուարթ կողքին վերի մէկ երրորդին, ճերմակ լայն երիզի մը վրայ տպագրուած խորագրով այդ գրքոյկներէն իւրաքանչիւրը մէկ դէպքի կամ ձեռնարկի նուիրուած է: Ամենէն երկարը 132 էջ կը կազմէ: Բայց եթէ այդ պրակները ի մի բերուին եւ կազմուին, եգիպտահայոց նորօրեայ պատմութեան ամբողջ հատոր մը կը կազմեն:

Ո՞վ է այս բոլոր պրակներուն եւ գիրքերուն (այո, նաեւ երկու գիրքեր) ետին կէցող մարդը: Մանկութենէն իսկ հանդարտաբարոյ եւ պրպտող մտքի տէր, տասներկու տարեկանէն իսկ մոլի ամէն հայկականի, մանաւանդ հայոց պատմութեան, Պերճ Թերզեան այսօր այն մատի վրայ համբուող հայերէն է, որոնք կը տիրապետեն արեւմտահայերէնին եւ որոնք գիտակ են հայոց եւ իրենց գաղթավայրի պատմութեան: Ասոնց եթէ աւելցնենք փայլուն յիշողութիւն մը, պիտի ունենանք իսկական պատմաբանի մը խառնուածքը:

-Ես պատմաբան չեմ. առիկա լուրջ մասնագիտություն է,- կ'ըստ եւ կը յիշեցնէ ամէն առիթի:

Պերճ Թերզեանին քոյրը՝ Մարի Թերզեան, իր յուշագրական «Գաղթականներու Դուստրը»¹ անգլերէն հատորին մէջ քանի մը տողեր նուիրած է փոքր եղբոր՝ Պերճին, որոնցմէ մէկը կ'ըստ.

“At twelve, he is deeply interested in Armenian history. All summer long, he borrowed books from the private library of Nanik, my classmate, reading them voraciously”².

Նաեւ ծայրայեղօրէն ազնիւ եւ համեստ է այս մարդը:

Too good to be true.

Բայց ...

(Ա իս այս «բայց»ը, որ ամէն տեղ ինքզինք կը խորէ ...):

Միանշանակ չէ մարդոց կարծիքը իր անձին մասին (չարախօսները եթէ կարենային, իր գիրքերն ալ պիտի չարախօսէին անշուշտ). իր ուղիղ կեցուածքը եւ ճիշդին ու ճշմարտութեան հանդէպ իր անսասան կարծիքը զինք «անբաղձալի» կը դարձնեն լպրծուն շրջապատերու մէջ, ուր քալելու համար մարդ պետք է նուազագոյնը ցատկոտել գիտնայ կամ գոնէ լարախաղաց ըլլայ:

Այնքան ծանրաբարոյ այս մարդը ունի թաքուն, միայն հարազատբարեկամներուն ծանօթ նուրբ երգիծանք մը, որուն անգամ մը հանդիպելէ ետք մարդ կրկին ու կրկին պիտի ուզէ հանդիպիլ, մանաւանդ երբ կ'ընկերանայ հազիւ նշմարելի նայուածքով մը, որ կարծես հարց կու տայ «Տեղ հասա ւ *հիւմըրըս*»:

Երբեմն հայերուն մէջ այնպիսի յատկություններ կը տեսնես, որ պահ մը կը փորձուիս կասկածիլ՝ իրա՞ւ հայ է ...: Նման յատկություն մը ունի նաեւ Պր. Թերզեանը, յատկություն մը այնքա՞ն անյարիր հայկական խառնուածքին՝ մտիկ ընելու ունակություն, մանաւանդ այդ ունակությունը արտայայտելու կարողություն, որովհետեւ երբ կը խօսիք իր հետ, կրնաք վստահ ըլլալ, որ իր ամբողջ ուշադրութեամբ մտիկ կ'ընէ, եւ ոչ թէ մարդոց մեծամասնութեան նման իր յաջորդ ըսելիքը կ'որոճայ, ըսելիք, որ կրնայ բնաւ կապ չունենալ խօսուած նիւթին հետ:

“He is a good listener and insightful far beyond his age”³.

Խառնուածքի այլ հազուագիւտ գիծ մըն է կարծիք տալը երեւոյթի մը մասին, անկախ այդ երեւոյթին ետին կեցող անձէն. այլ խօսքով՝ առանց շփոթելու մարդը գործին հետ, առանց անձը քննարկելու եւ քննադատելու, գործը քննարկելու փոխարէն:

Երկու դար առաջ Ստեփան Ռսկան (1825-1901) իր «Հայ

Քննադատը» գրութեան մէջ պարզ եւ յստակ բանաձեւած է խառնուածքի այս «յատկութիւնը» եւ ըսած.

«Հայու մը համար ուղիղ դատում մը ընելը անոր թշնամութիւն ընել կամ անոր հորը փորել է, չար մտքով եւ չար կամքով»:

Երեսուն տարիէ ի վեր գրած է ու կը շարունակէ գրել մեզ, սփիւռքահայերս մտահոգող, տագնապեցնող, այսօր արդէն խուճապի մատնող հարցերու մասին: Այդ բոլորը հաւաքուած են իր «Յետադարձ Անդրադարձ» հատորին մէջ (2010), որուն նուիրուած է «կապոյտ գիրք» երէն մէկը՝ «Յետադարձ Անդրադարձ - Գրախօսականներ», այս գիրքին մասին լոյս տեսած գրախօսականները ամփոփելով 63 էջերու մէջ:

Իսկ այս հաստատար (316 էջ) գիրքէն առաջ, 2008-ին լոյս տեսած է այլ հաստատար (308 էջ) գիրք մը, այս անգամ արաբերէն լեզուով, ինչ որ կը նշանակէ թէ Պ. Թէրզեան, ի տարբերութիւն Միջին Արեւելքի սփիւռքահայերուն, լաւ գիտէ նաեւ արաբերէն լեզուն: Արդէն ընդունուած իրողութիւն է, թէ նախ պէտք է մայրենի՝ ն քաջ իմանալ, ապա անոր վրայ նոր լեզու մը հիմնել, կատարելապէս սորվելու համար գայն:

Այստեղ ալ սակայն Պր. Թէրզեանի համեստութիւնը կը միջամտէ.

-Ոչ ոչ, ես այնքան ալ հմուտ չեմ արաբերէնին, որ ՇԱՏ դժուար լեզու մըն է ...

-Բայց այդպէս գրուած է Ալիս Տեփոյեանի նոր լոյս տեսած գիրքին՝ «Խօսուն Դօղանջներ Մօտիկ Անցեալէն»ի մէջ «հմուտ արաբագէտ տիար Պերճ Թէրզեանը» (էջ 109):

Խանդավառութեամբ սկսուած այս գրութիւնը, որ տող առ տող դէպի ամբողջացում կ'երթար, մեծ-մօրս ձեռագործին համբերութեամբ, սկսաւ դանդաղիլ. որքան ծանօթացայ ուրուադէմքին տիրոջ, այնքան գրելիքներս աւելցան հիացմունքիս համեմատութեամբ, որուն խոտոր համեմատութեամբ գրիչս դանդաղեցաւ՝ կը վախնայի, իրապէ՛ս կը վախնայի իր համեստութիւնը վիրաւորելէ:

* * *

Եւ հիմա, իր մահուան առջեւ խորապէս տրտում, մեծ բարեկամ մը կորսնցնելու տխրութեամբ, կը խմբագրեմ իրեն նուիրուած գրքոյկը:

Նահապետ, առաջնորդ, մտաւորական, խոհեմ, համեստ, ազնիւ, իմաստուն, հետեւողական, տեսլապաշտ, յանդուգն, խոհական, համբերատար...

Այս բոլոր ածականները եւ դեռ շա՛տ աւելին օգտագործուած են այս գրքոյկին նախորդ էջերուն մէջ, նկարագրելու համար մարդ մը, որ դարձած էր եգիպտահայութեան հաստաբուն կաղնին, որ մտած էր ՀԲԸՄիութեան շարքերը որպէս անոր մէկ զաւակը, բայց կեանքին վերջին տարիներուն դարձեր էր հայրը Եգիպտոսի ՀԲԸՄիութեան, հօր մը պէս գուրգուրալով զայն, անընդհատ մտածելով անոր բարօրութեան մասին եւ բոլոր միջոցներով ջանալով ապահովել անոր յարատեւութիւնը այս ասպնջական հողերուն վրայ, Եգիպտոսի, եգիպտահայութեան համար երկրորդ հայրենիքին մէջ: Ինչ որ ալ գրուի իր մասին, իր մտերիմներէն եւ գործակիցներէն զատ ոչ ոք պիտի կարենայ գիտնալ, նոյնիսկ գուշակել այն հեռատեսութիւնը, որ կ'օգտագործէր իր բոլոր աշխատանքներուն մէջ, անձնական թէ միութենական: Եւ ոչ ոք կրնար ենթադրել, թէ իր առերեսոյթ հանդարտութեան տակ, սուր միտքը անընդհատ կը բանէր, անընդհատ արթուն էր օգտագործելու համար նուագագոյն առիթը, երբ հարցը կը վերաբերէր մանաւանդ իր սիրելի Միութեան:

Այսպէս է որ, փաստաբանական գրասենեակի մը մէջ, սպասումի պահու մը, երբ պատահաբար ականջալուր կ'ըլլայ հեռաձայնային խօսակցութեան մը, հողային հարցի մը մասին, կ'անդրադառնայ թէ ճիշդ նոյն պարագաներուն մէջ կը գտնուի Միութեան մեծ հողերէն մէկը:

Եւ կը սկսի երկար, տարիներ տեւող գործընթաց մը, որ շնորհիւ Պերճ Թերզեանի յամառ, յարատեւ եւ համբերատար ջանքերուն, ի վերջոյ կը պսակուի փառաւոր յաջողութեամբ, ապահովել կարելոր եկամուտ մը Միութեան համար:

Մի՛շտ նոյն ուշադրութիւնն ու գուրգուրանքը ցուցաբերած է Միութեան հանդէպ, անոր ամենէն փոքր ձեռնարկներէն, մինչեւ ամենէն մեծ նուաճումները:

Վերջին տարիներու իր մեծ երազներէն մէկը, թերեւս մեծագոյն երազը եղած էր արեւմտահայերէն դասաւանդող ուսուցիչներու պատրաստութեան համար հիմնարկ մը պատրաստել, որովհետեւ հաւատացած էր, որ միա՛յն լեզուով, հայերէնի իմացութեամբ է որ պիտի կարենանք պահել մեր ինքնութիւնը, աշխարհի այս լափիւրիինթոսին մէջ, թուայնացումի հոսանքներուն վտանգին ենթակայ:

Ոչ մէկ պատուարի առջեւ կանգ առաւ, ո՛չ մէկ խոչընդոտ ընդունեց որպէս այդ, այլ ապաւինած հայութեան եւ հայերէնին հանդէպ ունեցած իր հզօր հաւատքին, բախեց բոլոր դռները, բախեց կրկին,

երրորդ եւ բիրերորդ անգամ, երբ այդ դռները փակ գտաւ իր առաջարկներուն առջեւ, երբ ունկերը խցուած գտաւ իր այնքան տրամաբանական խօսքերուն առջեւ:

Թէեւ այդ մեծ երազը անկատար մնաց եւ դարձաւ վերջին օրերու իր մտմտութիւնը - կը խօսէր, կը պատմէր, պատմութենէն օրինակներ կը բերէր, հաստատելու համար, որ առանց հայերէնին հայը չի կրնար ապրիլ որպէս հայ - բայց եւ այնպէս, ինչպէս իր սովորութիւնն էր մտածումը ծրագրի, ապա գործնականի վերածել, մեկնումէն ետք կ'իմանանք, որ այդ մեծ երազին համար նուիրեր է հիմնադրամ մը, որուն եկամուտը պիտի ծառայէ անոր իրագործումին:

Մեծ իր անձով եւ գործերով:

Խորագոյն յարգանք իր վաստակին եւ յիշատակին առջեւ:

¹ “The Immigrants’ Daughter”, Mary Terzian, 2005

² Նոյն տեղը, էջ 217.

³ Նոյն տեղը, էջ 241.



Խմբագիր՝ Մարուշ Երամեան
Էջադրում՝ Շահէ Լուսարարեան
Տպագրութիւն՝ Nubar Digital

